

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### ՔԵՆԵՏՈՒԷՆ, «ՅՈՒՆԻՍԵՔՍ 27»

Անցեալ շաբաթ իրապարակուեցան Ամերիկայի նախագահ Դոն Թրամփի սպանութեան առնչուող եւ մինչեւ օրս գաղտնի պահուող արխիւներու մէկ մասը եւս:

Հրապարակուած փաստաթուղթերէն մէկուն մէջ, ԷՖ.Պի.Այ-ի (FBI) այդ օրերու տնօրէն ճէյ Էտկար Յուվըր, տեղեկանալի ետք որ, նախագահ Քենետին սպանող՝ Լի Յարվի Օգուալտ, մէկ բանտէն միւսը փոխադրուելու ընթացքին ինք եւս սպանուած է, թելադրած է քայլեր ձեռք առնել, համոզելու համար Ամերիկացի ժողովուրդը, որ նախագահի սպանութիւնը մէկ անհատի գործն էր:

Անցեալ շաբաթ Յայաստանի մէջ ընդունեցաւ «Յոյնութեան 27»-ի ոճ-րագործութեան տարելիցը: 1999 թուականի Յոյնութեան 27-ին զինեալ յարձակում տեղի ունեցաւ Ազգային ժողովի վրայ: Սպանուեցան երկրի փաստացի ղեկավարները՝ Խորհրդարանի նախագահ Կարէն Տեմիրճեան եւ վարչապետ Վազգէն Սարգսեան: Նոյնպէս զոհուեցան Խորհրդարանի փոխնախագահներ Եւրի Բախշեան եւ Ռուբէն Սիրոյեան, պատգամաւորներ Արմենակ Արմենակեան, Սիքայէլ Քոթանեան, Յենրիկ Աբրահամեան եւ նախարար Լեոնարտ Պետրոսեան:

Այդ օրը, իշխանութեան ողջ մնացող ներկայացուցիչները յայտարարեցին, որ Խորհրդարանի վրայ յարձակում գործած խմբակի ետին ոչ մէկ այլ կուսակցութիւն կամ ուժ չկար եւ թէ անոնք գործած էին առանձին: Այս հաւաստիացումը ընելու պահուում, Նայրի Յունանեանի գլխավորած անհաբեկչական խումբի անդամները տակաւին չէին յանձնուած, զոհերու դիակները կը մնային գետինը, իսկ Ռոբերտ Քոչարեան մեկնած էր Խորհրդարան «բանակցելու» համար Յունանեանին հետ՝ որպէսզի անձնատուր ըլլան:

Հետագային տեղի ունեցած դատավարութեան ընթացքին, իշխանութիւններուն կողմէ աշխատանք տարուեցաւ, որպէսզի չբացայայտուին ոճրագործութեան ծախքերը, պատուիրատուներ ի յայտ չգան ու ամբողջ պատասխանատուութիւնը բեռնուի անհաբեկչական խումբի անդամներուն վրայ:

54 տարիները անցած են եւ Ամերիկայի ժողովուրդի մէկ մասը տակաւին չեն համոզուած, որ նախագահ Քենետիի սպանութիւնը մէկ անձի գործն էր:

Նոյնպէս, 18 տարիներ ետք Յայաստանի ժողովուրդը տակաւին չէ ընդունած, որ «Յոյնութեան 27»-ը անհատներու գործն էր եւ ընդհակառակը՝ համոզուած է որ, պատահածը պետական յեղաշրջում մըն էր, որ երկիրը հասցուց այսօրուայ վիճակին:

«ՄԱՍԻՍ»

## Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովուապետական Այցը ԱՄՆ Հայոց Արեւմտեան Թեմ

Հոկտեմբեր 25-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ժամանեց Լոս Անձելըս, սկստիւով ԱՄՆ Հայոց Արեւմտեան Թեմ իր այցելութիւնը:

Հայրապետական այցելութեան ծիրէն ներս Հոկտեմբեր 26-ի առաւօտեան Վեհափառը այցելեց Փաստաւորացի մէջ գտնուող ՀԲԸՄ-ի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» վարժարան, ուր հանդիպում ունեցաւ աշակերտութեան հետ:

Հանդիպման ներկայ էին նաեւ բարերարներ տէր եւ տիկին Վաչէ եւ Թամար Մանուկեանները, ՀԲԸՄ նախագահ տիար Պերճ Սեդրակեանը եւ հաւատացեալ այլ հայորդիներ:

Հայրապետական պատուիրակութեան Միացեալ Նահանգներու մէջ միացած էին ԱՄՆ Հայոց Արեւելեան Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանը, Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբգար եպիսկոպոս Յովակիմեանը, ԱՄՆ Հայոց Արեւելեան Թեմի էքզիկիստիկ կապերու պատասխանատու եւ Թեմական նուիրակ Գերաշնորհ Տ. Վիգէն արքեպիսկոպոս Ալքազեանը:

Աշակերտները Վեհափառ Հայրապետին դիմաւորեցին Հայրապետական մաղթանքի երգեցողութեամբ: Կրթական հաստատութեան սաները հանդէս եկան զեղարուեստական կատարումներով:



Տէր եւ տիկին Վաչէ եւ Թամար Մանուկեաններ, Առաջնորդ Գերճ Տ. Յովակիմ Արք. Տէրտէրեան, ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակեան եւ Վեհափառը «Վաչէ եւ Թամար Մանուկեան» վարժարանէն ներս

Վերջաւորութեան Նորին Սրբութիւնն իր օրհնութիւնն ու մաղթանքները փոխանցեց սաներուն ու մանկավարժներուն եւ դպրոցին նուիրեց խաչքարի մանրակերտ:

Նոյն օրը Վեհափառ Հայրապետն այցելեց «Արարատ Տուն», ուր խնամք կը մատուցուի հայ տարեցներուն: Նորին Սրբութիւնը իր զնահատանքը յայտնեց հաստատութեան խնամակալ մարմնին, աշխատակիցներուն, Հայրապետա-

կան օրհնութիւնն ու բարեմաղթանքներ բերաւ՝ տարեցներուն:

Հայոց Հայրապետը խնամատար հաստատութեան նուիրաբերց Գէորգ Սուրէնեանցի «Տիրամօր» սրբապատկերի կրկնօրինակը: Այնուհետ Նորին Սրբութեան ձեռամբ կատարուեցաւ «Արարատ Տան» նոր մասնաշէնքի յուշաքարի օրհնութեան արարողութիւնը:

Շար.ը էջ 7

## Պաքու Բողոքի Գիր Յղած է Մեքսիքացի Պատգամաւորներու Ղարաբաղ Այցի Կապակցութեամբ

Պաշտօնական Պաքուն բողոքի գիր յղած է Մեքսիքային՝ այդ երկրի խումբ մը պատգամաւորներու Լեռնային Ղարաբաղ այցի կապակցութեամբ:

ԱՊԱ լրատուական գործակալութեան փոխանցմամբ՝ մայրաքաղաք Մեքսիքոյի մէջ Ատրպէյճանի գործերու ժամանակաւոր հաւատարմատար Մամետ Թալիբովը Մեքսիքայի խորհրդարանի խօսնակի հետ հանդիպման ընթացքին պահանջած է համակողմանի ուսումնասիրել պատգամաւորներու զարաբաղեան այցը եւ համապատասխան քայլեր ձեռնարկել:

Մեքսիքացի խորհրդարանականները Լեռնային Ղարաբաղ այցելած էին Հոկտեմբեր 24-ին: Ստեփանակերտի մէջ ընդունուած էին նախագահ Բակո Սահակեանի կողմէ եւ հիւրընկալուած էին Արցախի Ազգային Ժողովէն ներս:

Ղարաբաղ այցելած մեքսիքա-

## «Մենք Կ'անիծենք Հայաստանի Տիրացման Քաղաքականութիւնը» Էրտողան.

Պաքու-Թիֆլիս-Կարս երկաթգիծի բացման արարողութեան մասնակցելու նպատակով Ատրպէյճանի մեկնած Թուրքիոյ նախագահ Ռեճէփ Թայիփ Էրտողան հերթական անգամ յայտարարութիւն ըրած է Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան վերաբերեալ: Սպառնալով իր քաղաքական բառապաշարը՝ այս անգամ Էրտողանը անցած է անէ՛քներու ժանրին:

Ինչպէս կը հաղորդէ «Արմենիքա», ատրպէյճանական լրատուամիջոցներուն տուած հարցազրոյցի մը ընթացքին Էրտողան, մասնաւորապէս, յայտարարած է. «Մենք կ'անիծենք Հայաստանի գրաւման քաղաքականութիւնը»: Ան նշած է, թէ ԼՂ հիմնահարցը «արիւնահոսող վէրք է ոչ միայն Ատրպէյճանի, այլեւ՝ Թուրքիոյ համար»:

## ԱՐՏԵՐԿԻՐ ԱՊՐՈՂ ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

2018 Մայիսին Լիբանանի մէջ տեղի պիտի ունենան խորհրդարանական ընտրութիւններ: Համաձայն խորհրդարանի նոր օրէնքին, արտերկիր ապրող լիբանանցիներուն իրաւունք պիտի տրուի իրենց բնակած երկիրներուն մէջ մասնակցելու այդ ընտրութիւններուն:

Հետեւաբար, կոչ կ'ուղղենք արտերկիր ապրող լիբանանահայերուն՝ առցանց արձանագրուելու հետեւեալ կայքէջ մուտք գործելով.

www.diasporavote.mfa.gov.lb  
Արձանագրութեան ժամկէտը կ'աւարտի 20 Նոյեմբեր 2017-ին  
Ս.Գ.Հ.Կ. Ընտրական Կեդրոնական Գրասենեակ

Շար.ը էջ 5

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Երեւանի Համար Մտածուած Օղակը Ծուղակ Դարձաւ Պաքուի Համար

ՅԱԿՈԲ ԲԱՐԱԼԵԱՆ

Հոկտեմբերի 30-ին Ատրպէյճանի, Վրաստանի եւ Թուրքիայի դեկավարները բացել են Պաքու-Թբիլիսի-Ախալքալաք-Կարս երկաթուղին: Երկաթուղային այդ նախագծի իրականացումը սկսուել է 2008 թուականից: 9 տարի անց այն փաստօրէն պատրաստ է:

Առերեւոյթ, նախագիծն ունի հակահայկական բնույթ, եւ Թուրք-խան ու Ատրպէյճանը այն նախաձեռնել են Հայաստանի տրանսպորտային շրջափակումն ու մեկուսացումը խորացնելու համար: Թերեւս այդ հանգամանքն էր պատճառը, որ միջազգային կառույցները, ԱՄՆ, Եւրամիութիւնը հրաժարուեցին տրանսպորտային այդ նախագծի ֆինանսավորումից, ու երկաթուղին գործնականում կառուցուեց առաւելագոյն ատրպէյճանական փողով:

Երկաթուղային նախագծի հետ կապուած իրավիճակը բաւականին հակասական է: Մի կողմից այն իսկապէս ունի հակահայկական բնույթ, քանի որ առկա էր Կարս-Գիւմրի-Ախալքալաք-Թբիլիսի-Պաքու տարբերակը, սակայն հայ-թուրքական սահմանի փակ լինելու պարագայում այն դուրս է օրակարգից: Ըստ այդմ, Կարս-Ախալքալաքի կառուցումից յետոյ Կարս-Գիւմրի թերեւս յայտնուում է էլ աւելի լուսանցքային հեռանկարում: Այդ իմաստով, Թուրքիան ու Ատրպէյճանն այսպէս ասած միանում են շրջանցելով Հայաստանը:

Որեւէ ռազմավարական կորուստ Հայաստանն այդ երկաթուղուց կարծես թէ չունի եւ ըստ երեւոյթի դա է նաեւ պատճառը,

որ Արեւմուտքը չհամաձայնելով ֆինանսավորման կամ համաֆինանսավորման առաջարկներին, այդուհանդերձ չհակադրուեց նախագիծն եւ չխանգարեց դրա իրականացմանը, առաւել եւս չփորձեց միջամտել եւ Վրաստանին համոզել, որ չներգրաւուի Հայաստանը մեկուսացնող նախագիծին: Իսկ հաշուի առնելով Վրաստանի հետ Արեւմուտքի յարաբերութիւնը, անհրաժեշտութեան դէպքում թերեւս դժուար չէր լինի Թբիլիսիին հետ պահել այդ քայլից:

Բայց, ըստ ամենայնի Արեւմուտքը այլ կերպ նայեց Կարս-Ախալքալաքի նախագիծին: Թբիլիսին միանալով նախագիծին, գործնականում հանդիսանում է Թուրք-ատրպէյճանական նախագիծը եւրաստրանտեան պարեկը:

Այդ դէպքում հարց է առաջանում, թէ ինչու է թոյլ տալ, որ նախագիծը իրականանայ, որպէսզի յետոյ էլ «պարեկութիւն» սահմանուի դրա վրայ: Աւելի լաւ չէ՞ր թոյլ չտալ եւ այսպէս ասած կենսունակ պահել Կարս-Գիւմրի-Ախալքալաք գծի հեռանկարը: Տեսականում, գուցէ: Գործնականում ակնյայտ է, որ չկայ այդպիսի հեռանկար եւ անգամ Կարս-Ախալքալաք-Պաքու նախագիծը այսպէս ասած թոյլ չտալու պարագայում էլ Արեւմուտքը հազիւ թէ կարողանար ստիպել Պաքուին ու Անկարային գնալ Կարս-Գիւմրի գծի վերաբացման, առանց դարաբաշխան յայտնի նախապայմանների: Իսկ Հայաստանին էլ բնականաբար ոչ միայն չէին կարող, այլ նաեւ աշխարհաքաղաքական շահերից ելնելով ուղղակի չէին ստիպի գնալ այդ պայմանների բաւարարմանը:

Աւելին, Արեւմուտքն օգնում է Հայաստանին չտրուել այդ պայմաններին, տեղի չտալ դրանց:

Փոխարէնը, թոյլ տալով Կարս-Ախալքալաք-Պաքու նախագիծը, այն էլ հիմնականում ատրպէյճանական ֆինանսների հաշուին, Արեւմուտքը լուծեց մի քանի խնդիր: Նախ, Ատրպէյճանի նաւթատուարները այդ եզակի օրինակով ծառայեցին տարածաշրջանի տնտեսական հեռանկարներին: Բանն այն է, որ Պաքուի նաւթատուարներն այլ առումով գերազանցապէս ծառայում են անվտանգութեան սպառնալիք գնեցնելուն, ի դէմս սպառնալիքներ Վրաստանի հանդէպ, որ հրահրում է Պաքուն:

Իսկ հաշուի առնելով այն, որ Վրաստանը Կովկասում հանդիսանում է եւրաստրանտեան տնտեսաքաղաքական եւ ռազմա-քաղաքական ինստիտուցիոնալ ներկայացուածութեան այսպէս ասած յենակէտ, այդ թւում նաեւ Հայաստանի անվտանգութեան տեսանկիւնից կարեւոր թիկունքային նշանակութեամբ, Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Պաքու երկաթուղին գործնականում հանդիսանում է Թուրք-ատրպէյճանական տանդեմի այսպէս ասած եւրաստրանտեան կառավարելիութեան լծակ:

Ի դէպ, այդ իմաստով ուշագրաւ էր Վրաստանում 2012-ի իշխանափոխութիւնից յետոյ վարչապետ Բիձինա Իւանիշվիլիի յայտարարութիւնը, որը իշխանութեան գալուց կարճ ժամանակ անց յայտարարեց, որ Կարս-Ախալքալաքի շինարարութիւնը չի գոհացնում Թբիլիսիին, առաջացնում է հարցեր եւ այն պէտք է դադարեցնել: Իւանիշվիլին այդ մասին յայտարարեց Պաքու այցից անոտ:

տարարեց Պաքու այցից անոտ, որից յետոյ էլ յայտարարեց, որ խնդիրները լուծուած են, եւ շինարարութիւնը կարող է շարունակուել: Դա օրինակ է, թէ ինչպէս Թբիլիսին կարող է այդ նախագիծը կիրառել որպէս գործիք Ատրպէյճանի եւ Թուրքիայի հետ յարաբերութիւններում:

Կարող է Հայաստանը միանալ երկաթուղուն: Վրաստանի իշխանութիւնն օրինակ չի կարծում, թէ դրա համար կայ խոչընդոտ, թէեւ չի բացառում, որ Թուրք-խան ու Ատրպէյճանը դնեն որոշակի պայմաններ: Բուն խնդիրը սակայն այն է, որ, եթէ Հայաստանը կարողանա միանալ երկաթուղուն եւ օգտուել դրանից, ապա դա իհարկէ կը լինի նոր եւ լաւ հնարաւորութիւն: Եթէ Հայաստանը դա այդուհանդերձ չկարողանայ, ապա այստեղ իհարկէ չարժէ այդ հանգամանքը դարձնել հայ-վրացական յարաբերութեան խնդիր, քանի որ չկարողանալու դէպքում Հայաստանը գործնականում չի կորցնում ոչինչ, փոխարէնը խիստ անցանկալի է հայ-վրացական անհարկի լարուածութիւնը:

Խնդիրը տուեալ դէպքում այն է, թէ Հայաստանն ինչպէս կը կարողանայ զարգացնել այսպէս ասած գուզահեռ կամ «հատող» ուղղութիւնը՝ հայ-վրացական կոպերացիան, նաեւ Իրան-Հայաստան-Վրաստան առանցքը: Ընդ որում, դրա զարգացումը անհրաժեշտ եւ կարեւոր է նաեւ Թբիլիսիի համար, քանի որ Վրաստանի այսպէս ասած բնական անվտանգութիւնը հնարաւոր է միայն Հայաստանի հետ ռազմավարական գործակցութեամբ:

«ԼՐԱԳԻՐ»

Տարօրինակ Պատերազմ Հայաստանում

ԱՐԱՍ ԱՍՏՈՒՆԻ

Հոկտեմբերի 30-ից խորհրդարանը սկսել է Կարէն Կարապետեանի կառավարութեան ներկայացրած 2018 թուականի պիւտճէի նախագծի քննարկումները: Այդ նախագիծը սկզբունքորէն ոչնչով չի տարբերուում վերջին գրեթէ տասնամեակի պիւտճէներից, քանի որ այն գտնուում է, այսպէս ասած, գոյատեւման փիլիսոփայութեան շրջանակում:

2009 թուականից ի վեր Հայաստանի գործնականում բոլոր պիւտճէները գոյատեւման փիլիսոփայութեան շրջանակում են: Դա չի նշանակում, որ դրանից առաջ Հայաստանն ապրում էր ուղղակի մէկը միւսից զարգացման պիւտճէների ոսկեդարում: Բայց մինչեւ 2009 թուականը համաշխարհային բարենպաստ տնտեսական կոնյունկտուրան, աճող տրանսֆերտները թուլացնում, մեղմում էին պիւտճէի, այսպէս ասած, ծանրութիւնը եւ հանրութեան կառուածութիւնը դրանից: Այժմ, երբ արտաքին կոնիւնկտուրան բացասական է, երբ տրանսֆերտները նուազման ռեկորդներ են արձանագրում, պիւտճէն, այսպէս ասած, դառնում է առաւել նկատելի, բոլորը սկսում են պիւտճէին նայել մանրադիտակով: Ու պարզում է, որ անկախութեան 26-րդ տարում Հայաստանն ապրում է գոյատեւման փիլիսոփայութեամբ պիւտճէի պայմաններում, եւ տնտեսական քաղաքականութեան, այսպէս ասած, տարեկան թիւ մէկ փաստաթուղթը

այդ իմաստով հանրութեանը չի տալիս որեւէ լուսաւոր ուղենիշ, դրական սպասումների որեւէ համոզիչ հիմք՝ բացառութեամբ այն հաւաստիացումներից, որոնցով փորձում են հանդէս գալ պիւտճէի կազմող կառավարութեան ներկայացուցիչները:

Խնդիրն այն է, որ երբ Հայաստանում մէկ տարի առաջ փոխուում էր կառավարութիւնը, հանրութիւնն այդ փոփոխութիւնից ոչ թէ սպասում էր լուսաւոր ապագայի վերաբերեալ, այսպէս ասած, բանաւոր հաւաստիացումների կամ պարզապէս բանահիւստութեան նոր դէմքերի, այլ գործիչներին, որոնք բանահիւստութեան փոխարէն, հանրութեանը կը տային դրական սպասման գործնական ազդակներ: Առայժմ այդ ազդակները շարունակում են մնալ բանահիւստութեան ժանրում, պարզապէս դեռեւս շարունակում են համակրելի մնալ դրանով զբաղող կառավարական դէմքերը՝ ի տարբերութիւն նախորդ կառավարութեան: Միւս կողմից՝ այստեղ կայ, թերեւս, աքսիոմատիկ մի ճշմարտութիւն, որը բաղկացած է գուցէ երկու կէտից. Հայաստանում իրավիճակի սկզբունքային փոփոխութեան համար անհրաժեշտ են իշխանութեան ձեւաւորման հանրային մասնակցութիւնն ենթադրող մեխանիզմ, եւ պարզապէս ձեւաւորուած իշխանութիւն: Այսօր չկայ թէ՛ մէկը, թէ՛ միւսը:

Իշխանութեան ձեւաւորման մեխանիզմը հանրային չէ, այսինքն՝ հասարակութեան կամքը դրանում խնդիր է, ոչ թէ որոշիչ

գործօն: Խնդիր է, որ իշխանութիւնը յաղթահարել ու յաղթահարում է ուժով, վարչական լծակով, ֆինանսական միջոցներով: Իհարկէ, մինչ այժմ իշխանութիւնը այդ ճանապարհով ձեւաւորուել է առանց հանրային վճռորոշ մասնակցութեան, բայց ներկայումս կայ մի առանձնայատկութիւն՝ ընտրութիւն կոչուող գործընթացը անցել է, իսկ իշխանութիւն չի ձեւաւորուել: Աւելին՝ այժմ հանրութիւն, ըստ էութեան, նոյնիսկ ֆորմալ առումով չկայ, ընտրութիւն չկայ, եւ իշխանութեան ձեւաւորումը պէտք է տեղի ունենայ յետընտրական ներիշխանական խմորումների միջոցով: Իսկ դա էլ իր հերթին բերում է մէկ այլ առանձնայատկութեան:

Բանն այն է, որ երբ կայ հանրային ֆորմալ խնդիր, համակարգն, ըստ էութեան, առնուազն այդ մասով ստիպուած է կոնսոլիդացուել մի խնդրի շուրջ եւ գործել դրա յաղթահարման ուղղութեամբ: Երբ այժմ բուն խնդիրն արդէն համակարգի ներսում է, չկայ հանրութեան թէկուզ ֆորմալ գործօնի հարց լուծելու անհրաժեշտութիւն, առաջանում է իշխանութեան համակարգի կոնսոլիդացիայի խնդիր: Չկայ կոնսոլիդացիա, սրւում են ներքին հակադրութիւններն ու հակասութիւնները: Դրանք սրւում են, հետեւաբար տնտեսութիւնն էլ դառնում է այդ իրադարձութիւնների, այսպէս ասած, գոհը, քանի որ ոչ ոք չի

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱՎԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՂԵ ԱՏԱՊԱՐԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Վիզիտ Սարգսեան Երբեք Չէ Խուսափած Զինուորական Ծառայութենէն»

Պաշտպանութեան Նախարարութեան Պարզաբանումը

Պաշտպանութեան նախարարի մամուլի խօսնակ Արծրուն Յովհաննիսեան դիմատետրի մէջ (facebook) յայտարարութիւն տարածած է պաշտպանութեան նախկին նախարար Սեյրան Օհանեանի կնիք՝ Ռուզաննա խաչատրեանի գրառման վերաբերեալ:

«Յարգելի գործընկերներ Ռուզաննա խաչատրեանի գրառման վերաբերեալ ձեր կողմից ուղարկուող հարցումները հասցեատէրը այդ գրառման հեղինակն է: Այդպիսին է նաեւ ՀՀ քաղաքացիական օրէնսգրքի «գրպարտութիւն» եւ «վիրաւորանք» ինչպէս նաեւ ՀՀ քրէական օրէնսգրքի «սուտ մատուցութիւն» յօդուածները տրամաբանութիւնը:

Անկախ այդ պարզաբանումներէ, ՀՀ պաշտպանութեան նախարարութիւնը պաշտօնապէս յայտարարում է.

1. Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար Վիզիտ Սարգսեանը երբեք էլ ինքնուրուի գինուորական ծառայութիւնից: 18 տարեկանից ի վեր (ինչպէս եւ մինչ այդ՝ կցագրման փուլում) չի եղել գինուորական ստի մէկ ծանուցում, որով նախատեսուած օրն ու ժամին չեն կայանայ առաջին իսկ կանչով: Չի եղել

մի գորակող, որի ժամանակ գորակողի ենթակայ լինելով խուսափէր այդ պարտաւորութիւնից: Պաշտպանութեան նախարարը երբեք էլ չի ունեցել եւ չունի որեւէ առողջական սահմանափակում, գորակողի տարկետման կամ ազատման առողջական որեւէ հիմք:

2. Նախարար Սարգսեանը երբեք էլ չի եղել հետախուզման մէջ, նրա նկատմամբ ռազմական ոստիկանութեան կամ իրաւապահ որեւէ այլ մարմինների կողմից չի իրականացուել որեւէ գործողութիւն, նախաքննական, հետախուզական, քննչական որեւէ ընթացակարգ:

3. ՀՀ օրէնսդրութեամբ սահմանուած կարգով Վիզիտ Ալեքսանդրի Սարգսեանը կատարել է հայրենիքի պաշտպանութեան իր սահմանադրական պարտքը՝ ծառայելով ՀՀ Զինուած ուժերում որպէս սպա: Զօրացրուել է պահեստազօր՝ աւագ լեյտենանտ գինուորական կոչումով:

Եւ իմ քննարկութեան ղեկավար Նիկոլ Փաշինեանը յայտարարած էր, որ Ռուզաննա խաչատրեանը, խօսելով ծառայութեան ինքնուրուի գինուորական ծառայութեան մասին, նկատի ունեցած է Վիզիտ Սարգսեանին: Ռուզաննա խաչատրեանը իր գրառման մէջ անուններ չէ նշած:

Ո՞ր Մնացին 850 Միլիոն Տոլարի Ներդրումները. Կը Պարզաբանէ Փոխնախարարը

«Ո՞ր մնացին 850 միլիոն տոլարի ներդրումները, որ մինչեւ 2017 թուականի Դեկտեմբերի 31-ը պէտք է ապահովուէին», խորհրդարանէն ներս յաջորդ տարուայ պիւտձէի նախագիծի քննարկման ժամանակ տնտեսական զարգացման եւ ներդրումներու փոխնախարար Տիգրան խաչատրեանին հարցուցած է Ծառուկեան զաշինք խմբակցութեան պատգամաւոր Նաիրա Զոհրապեանը:

Ան պաշտօնակցին կոչ ըրած է յստակ պատասխան տալ եւ վարկերը, որոնք բեռ են մեր սերունդներուն համար, ներդրում չհաշուել: «Այլպէս դուք կարող էք վաղը նաեւ ներդրում հաշուել դրսից եկած թրանսֆերները (փոխանցումները)», ըսած է Նաիրա Զոհրապեան:

Փոխնախարարը ըսած է, որ ուժանիւթի ոլորտի մէջ ներդրումներ կան, բայց կ'ուզէ անդրադառնալ 480 միլիոն տոլար ներդրումներուն, որոնք կատարուած են տարբեր ոլորտներու մէջ:

«Այդ 480 միլիոն տոլար ներդրումներէն 300 միլիոնի վերաբերեալ ես հենց հիմա մանրամասն տեղեկութիւն կարող եմ տալ ձեզ: Ամուլսարի ներդրումները դրանք ներդրումներ չեն: Օրինակ՝ թեթեւ արդիւնաբերութեան ոլորտում՝ 10 միլիոն տոլար, հանքագործութեան ոլորտում՝ 133 միլիոն, գիւղատնտեսութիւնում՝ 55, դեղագործութիւն՝ 6 միլիոն, խմիչքի արտադրութիւն՝ 5 միլիոն եւ այլն»,- ըսած է փոխնախարարը:

Ան ըսած է, որ այս տարուայ ինն ամիսներուն աշխատատեղերու քանակը աւելցած է 3300-ով, մինչեւ տարեվերջ այդ թիւը կը գերազանցէ 5000-ը:

Սամուէլ Պապայեան Կը Շարունակէ Մնալ Կալանաւորուած

«Սամուէլ Պապայեանի եւ միւսները գործով» դատական նիստին Ս. Պապայեանի փաստաբան Աւետիս Քալաշեան հանդէս եկաւ միջնորդութեամբ՝ փոխել իր պաշտպանելի նկատմամբ, որպէս խափանման միջոց ընտրուած կալանաւորումը: Դատաւոր Արշակ Վարդանեան խորհրդակցական սենեակէն վերադառնալէն յետոյ յայտարարեց, որ դատարանը կը մերժէ միջնորդութիւնը:

«Դատարանն արձանագրում է, որ թէեւ դատաքննութիւնը, ըստ էութեան, աւարտուել է, նուազագոյնի է հասցուել արդարադատութեան իրականացմանը միջամտելու, մասնաւորապէս ապացոյցները թաքնելու դիմումը, սակայն ամբաստանելու Պապայեանի

նին վերագրուած են հանցագործութիւններ, որոնց պայմաններում պահպանուած է ամբաստանելու Պապայեանին կալանք տակ պահելու քրէադատավարական ներկայ հիմքը՝ քրէական պատասխանատուութիւնից եւ պատժից խուսափելու վտանգը:

Դատարանի համոզմամբ, պաշտպանի ներկայացրած նոր հիմնաւորումը գործով դատաքննութեան աւարտը, սոյն միջնորդութիւնը բաւարարելու բաւարար փաստարկ չէ, որպէս ընթացող դատաքննութեանը ներկայանալու երաշխիք բաւարար չէ յանգելու այն համոզման, որ ամբաստանելու Պապայեանը, նրա նկատմամբ կալանքի այլընտրանքային տեսակ կիրառելու ու ազատ արձակելու

«Հոկտեմբեր 27»-ի Բացայայտումը Ուղիղ Կապ Ունի Մեր Պետականութեան Կայացման Դեմ: Արամ Սարգսեան

«Հոկտեմբեր 27»-ի բացայայտումը ուղիղ կապ ունի մեր պետութեան, պետականութեան կայացման հետ, երէկ «Եւրաբլուր» գինուորական պանթէոնին մէջ ըսած է Հայաստանի նախկին վարչապետ, «Ելք» խորհրդարանական խմբակցութեան անդամ, «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեանը:

«Հոկտեմբերի 27»-ից 18 տարի անց էլ անձնական վշտի զգացողութիւն կայ նաեւ քաղաքական առումով, պետութեանը եւ Հայաստանի քաղաքական դաշտին տուած խորն ու անդառնալի կորստի զգացում կայ, իսկ չբացայայտուածութիւնը տանում է նաեւ կասկածներին՝ ներսում հակառակորդներ եւ թշնամիներ ման գալու դաշտ, ինչը շատ-շատ վատ է: Բազմաթիւ անգամներ ես ասել եմ, որ «Հոկտեմբերի 27»-ի բացայայտումը ուղիղ կապ ունի մեր պետութեան, պետականութեան կայացման հետ», - լրագրողներու հետ զրոյցին ըսած է Արամ Սարգսեան:

Հարցին, թէ այսօր իշխանութեան մէջ կա՞ն մարդիկ, որոնք կապ ունին այդ ոճրագործութեան հետ, Արամ Սարգսեան պատասխանած է. - «Մեղքը պէտք է որոշի դատարանը: Հակառակ դէպքում՝ հանրութիւնը, հասարակութիւնն արդէն հետեւութիւն արել է, մեղաւորներին գտել է ու ինձ էլ ասում է՝ «որ ուժեղ տղայ լինէիր, պիտի դնէիր ու ճակատից կիւլլէիր»: Ես էդ մօտեցման կողմնակիցը չեմ, որովհետեւ պետութեան ու պետականութեան հիմնական բաղադրիչը նա է, որ մեղաւորին ու անմեղին որոշում է դատարանը: Եւ այս առումով կան հարցեր, շատ-շատ



«Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեան

հարցեր, որ այս իշխանութիւնները տալու են, բայց այդ հարցերը պէտք է տայ դատարանը»:

1999 թուականի 27 հոկտեմբերին յարձակում տեղի ունեցաւ Ազգային ժողովի վրայ, երբ հերթական նիստին կառավարութիւնը կը պատասխանէր պատգամաւորներու հարցերուն: Սպանուեցան Ազգային ժողովի նախագահ Կարէն Տեմիրճեանը, վարչապետ Վազգէն Սարգսեանը, խորհրդարանի փոխնախագահներ Եւրի Բախչեանը եւ Ռուբէն Միրոյեանը, պատգամաւորներ Արմենակ Արմենակեանը, Միքայէլ Քոթանեանը, Հենրիկ Աբրահամեանը եւ նախարար Լեւոնարտ Պետրոսեանը, եւս 8 հոգի վիրաւորուեցաւ:

2003-ի Դեկտեմբերին դատարանը ցմահ ազատազրկման դատապարտեց Նաչիբի Յունանեանին եւ անոր յանցախումբի 5 անդամներուն, յանցախումբի եւս մէկ անդամ դատապարտուեցաւ 14 տարուան ազատազրկման:

Յունուարէն Հոկտեմբեր Դրամական Փոխանցումները 15,5 Տոկոսով Աճած Են

2017 թուականի Յունուար-Հոկտեմբերին արտասահմանէն Հայաստան ֆիզիքական անձանց դրամական փոխանցումները 15,5 տոկոսով աճած են: Հոկտեմբեր 30-ին լրագրողներու հետ զրոյցի ընթացքին այս մասին յայտնեց Կեդրոնական դրամատուէրի նախագահ Արթուր Աւետեանը, որ կը մասնակցէր Աժ ֆինանսավարկային եւ պիւլստիկայի հարցերով մշտական յանձնաժողովին 2018 թուականի պետական պիւտձէի նախագիծի քննարկման:

Ոստքը գուտ ներհոսքի մասին է, այսինքն՝ այն մասին, թէ արտասահմանէն եկածը որքանով մեծ է արտասահման փոխանցումէն: Հրապարակուած վերջին վիճակագրութեամբ՝ Յունուար-Օգոստոսին աճը կազմած է գրեթէ 10 տոկոս, Սեպտեմբեր-Հոկտեմբերին ներհոսքը շարունակած է աճել: Հիմնականին մէջ փող կ'ուղարկեն

Ռուսաստանէն: Յունուար-Օգոստոսին անոր բաժին հասած է 87 տոկոսը կամ 409,5 մլն տոլար:

Նախքան Հայաստանի իշխանութիւնները բազմիցս նշած են, որ չափէն աւելի փոխանցումները տնտեսութիւնը կը վնասեն, որովհետեւ եկամուտները պէտք է աշխատանքային ըլլան: Սակայն այն մասին, թէ երկրի մէջ ինչպէս ստեղծել այս աշխատանքային եկամուտները, առայժմ արդիւնաւէտ պատասխան չեն տար:

Անկէ բացի, փոխանցումները շուկայի արտասահմանեան արժույթով կը լեցնեն: Իսկ այդ կրնայ հաշկական դրամը արժեւորել՝ իր բոլոր բացասական հետեւանքներով (արտասահման եւ ներմուծման համար): Այս պատճառով տարուան սկզբը ԿԲ-ն շուկայ բաց թողեց մօտ 100 մլն տոլար (դրամով փոխարկուած)՝ շուկայի մէջ արժույթ գնելով:

պայմաններում կը դրսևորի պատշաճ վարքագիծ, կը ներկայանայ դատարան, չի խուսափի քրէական պատասխանատուութիւնից: Դատարանը փաստում է, որ Պապայեանի պատշաճ վարքագիծը հնարաւոր է ապահովել նրա նկատմամբ ընտրուած խափանման միջոց կալանաւորումը պահպանելու պարագայում»,- որպէս միջնորդութեան մերժման փաստարկ ներկայացուց դատաւորը: Յաջորդ նիստը պի-

տի կայանայ 6 նոյեմբերին: Յիշեցնենք, որ ըստ Սամուէլ Պապայեանին առաջադրուած մեղադրանքին ան դրդած է խումբ մը անձեր՝ նախնական համաձայնութեամբ ապօրինի կերպով «Իգլա» տեսակի դիւրակիր հեթոտային համալիր ձեռք բերելուն, փոխադրելուն եւ պահելուն, ինչպէս նաեւ փոխարկման պարագային ձեռք բերած է յանցաւոր ճանապարհով ստացուած գոյք:

# ԼՈՒՐԵՐ

## Շարլ Ազնաուրը Անյարմար Հարց Տուած Է Իսրայէլի Նախագահին



«Ռաուլ Վալենպերկի» անուան միջազգային մրցանակը կը յանձնուի Շարլ Ազնաուրին

Երուսաղէմի մէջ Իսրայէլի նախագահի նստավայրին մէջ կայացած է Շարլ Ազնաուրի եւ անոր ուղեկցող ընտանիքի անդամներին հանդիպումը նախագահ Ռոուվէն Ռիվլինի ու Ռաուլ Վալենպերկի անուան միջազգային հիմնադրամի ղեկավարութեան հետ:

Ազնաուր հարցուցած է, թէ ե՞րբ ի վերջոյ Իսրայէլը պիտի ձանձնայ Հայոց ցեղասպանութիւնը:

«Ես ոչ գաղտնի հարց մը կ'ուզեմ Ձեզ ուղղել եւ չեմ սպասեր պատասխանի, այնուամենայնիւ կարեւոր է այն բարձրացնել:

Ինչո՞ւ Դուք չէք ձանձնար Հայոց ցեղասպանութիւնն այն պարագային, երբ դուք ալ տառապած էք նացիստական ռեժիմէն», - հարցուցած է Ազնաուրը:

Ի պատասխան՝ Ռիվլինը ըսած է, որ այդ մէկը քաղաքական հարց է, եւ իր՝ Քնեսեթի պատգամաւոր ու այնուհետեւ նաեւ նախագահ աշխատած ժամանակաշրջանին իւրաքանչիւր տարի հարցը Իսրայէլի խորհրդարան բարձրացուցած են, յիշատակած են Հայոց ցեղասպանութեան օրը, եւ ինքն ալ 2015 թուականին ՄԱԿ-ի ամպիոնէն բաւական յստակ խօսած է 1915 թուականին տեղի ունեցած Հայոց ցեղասպանութեան մասին:

«Մենք Քնեսեթի մէջ ներկայ եղած ենք այդ սարսափելի իրադարձութիւններու յիշատակի արարողութեան: Յաւոք, Իսրայէլի կառավարութիւնը չկրցաւ տեղի ունեցածը ձանձնալ որպէս Յեղասպանութիւն, եւ միակ հարցն այն է, թէ ինչպէս այն պիտի ձեւակերպուի: Եւ ես, որպէս Իսրայէլի նախագահ, պարտաւոր եմ յարգել Իսրայէլի կառավարութեան որոշումները:

Կոտորած, թէ ցեղասպանութիւն՝ սարսափելի բան տեղի ունեցած է Հայ ժողովուրդի հետ 1915 թուականին», - մասնաւորապէս, ըսած է Իսրայէլի նախագահը:

Կոտորած, թէ ցեղասպանութիւն՝ սարսափելի բան տեղի ունեցած է Հայ ժողովուրդի հետ 1915 թուականին», - մասնաւորապէս, ըսած է Իսրայէլի նախագահը:

## ԼՂՅ-ն Եւ Ատրպէյճանը Նոյն Հիմքով Անկախացած Են ԽՍՀՄ-էն

Ատրպէյճանին վրդովեցուցած է այն, որ յայտարարուած է շատ պարզ բան. որ հարցի որեւէ կարգաւորում կ'ենթադրէ, որ Ղաբաբազը չի կրնար Ատրպէյճանի կազմին մէջ ըլլալ: Այս մասին, երէկ՝ 26 Հոկտեմբերին, Կառավարութեան նիստին ետք լրագրողներու հետ զրոյցին նշած է Հայաստանի ԱԳ փոխնախարար Շաւարշ Քոչարեանը:

«Դրա շուրջ սկսուել է վայնասուն Ատրպէյճանում: Սակայն, երբ Պաքուն հարցականի տակ է դնում Արցախի Հանրապետութեան անկախութիւնը, իրենք մոռացել են, որ նոյն հիմքով անկախացել են թէ ԼՂՀ-ն, թէ Ատրպէյճանը: Դա եղել է դեռեւս ԽՍՀՄ օրօք, համաձայն ԽՍՀՄ օրէնքի եւ Խորհրդային Միութեան փլուզումով նրանց երկուսն էլ իրաւահասարակ են: Աւելին ասեմ՝ նոյնիսկ Արցախում անկախութեան հանրաքուէն աւելի շուտ է անցկացուել, քան Ատրպէյճանում: Այնպէս որ, իր անհեռանկար յայտարարութիւններով, Ատրպէյճանն իր անկախութիւնն է հարցականի տակ դնում», - ըսած է ան:

Ինչպէս կը հարցորդէ «Արմենիա»-ը, երկաթգիծի շահագործման մեկնարկի արարողութեան մասնակցած են Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ, Թուրքիոյ նախագահ Ռեճէփ Թայիփ Էրտողանը, Վրաստանի վարչապետ Գէորգի Կվիրիկաշվիլին եւ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբայեւ:

Ատրպէյճան, Վրաստան ու Թուրքիա Պաքու-Թիֆլիս-Կարս երկաթգիծի նախագիծի մեկնարկը տուած էին 2007 թուականին: Կազմակերպութիւնը, որ այն պէտք է շահագործման յանձնուէր 2012 թուականին, սակայն այն հնարաւոր եղաւ աւարտին հասցնել միայն 2017 թուականին:

Նախագիծի շրջանակին մէջ կառուցուած է Կարս-Ախալքալաք երկաթուղային գիծը, որու երկարութիւնն է 105 քմ է: Ատրպէյճանի պետական նաւթային հիմնադրամը ընդհանուր երկաթգիծի շինարարութեան յատկացուցած է 640,3 մլն ամերիկեան տոլար:

## ԱՄՆ-ն Պիտի Հեռանա՞յ ԵԱՀԿ Մինսքի Խումբէն

«Կը արծեմ, որ Թրամփի աշխատակազմը ԼՂ հակամարտութեան ամենաբարձր մակարդակով ուշադրութիւն չի դարձներ: Սա տեղի կ'ունենայ այն պատճառով, որ նախագահ Թրամփ կը փորձէ նուազեցնել ԱՄՆ ղեկավարութեան դերակատարութիւնը աշխարհի մէջ, այդ շարքին՝ Պետքարտուղարութեան մէջ խիստ պիւտճեցումներ կրճատումներով միջոցով: Ի վերջոյ, ամենայն հաւանականութեամբ, աշխատակազմը կ'ընդունի, որ Մինսքի խումբի միջոցով ԼՂ հակամարտութեան խաղաղ կարգաւորման բանակցումը կ'ապահովէ մէկ յստակ ծրագիր, որու վրայ ԱՄՆ-ն եւ Ռուսաստանը կրնան աշխատել համատեղ՝ յանուն խաղաղութեան», - «168 Ժամի» հետ զրոյցի ժամանակ այս մասին ըսած է ԱՄՆ պետքարտուղարի Հարաւային Կովկասի հարցերով նախկին օգնական, Ատրպէյճանի մէջ ԱՄՆ նախկին դեսպան, ԵԱՀԿ Մինսքի խումբի ամերիկացի նախկին համանախագահ, Տալինի մէջ Պաշտպանական հետազոտութիւններու միջազգային կեդրոնի տնօրէն Մեթիու Պրայզան՝ անդրադառնալով ԼՂ հարցի մէջ Սպիտակ տան դիրքորոշման:

Ըստ անոր, իսկապէս Մինսքի խումբին մէջ ԱՄՆ համանախագահի պաշտօնի կրճատումը անխօսեմ եւ նոյնիսկ՝ վտանգաւոր քայլ է, քանի որ այն կրնայ դատարկութիւն ստեղծել, ինչի արդիւնքով



ԵԱՀԿ Մինսքի խումբի ամերիկացի նախկին համանախագահ Մեթիու Պրայզ

Մինսքի խումբի գործընթացը կրնայ ձախողիլ, որու հետեւանքը լարուածութեան պարուրածեւ աճը կ'ըլլայ, որու գագաթնակէտը այլ պատերազմ կրնայ ըլլալ:

«Աւելին, պիւտճեցումներ տեսնելու է այս քայլը անիմաստ է, քանի որ ԱՄՆ համանախագահի պաշտօնի ծախսերը կը հոգայ ԵԱՀԿ-ը, եւ ոչ թէ ԱՄՆ կառավարութիւնը», - ըսած է Պրայզան:

Ի դէպ, անոր կարծիքով, ժընեւի մէջ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներ Սերժ Սարգսեանն ու Իլհամ Ալիեւը վերսկսած են դարբաղեան հակամարտութեան կարգաւորման իրական բանակցութիւնները:

## Հայաստանը Ռուսաստանէն Նոր՝ 100 Մլն Տոլարի Վարկ Կ'ակնկալէ՝ Ձեռք Գնելու Համար

Հայաստան կ'ակնկալէ մինչեւ տարեկան 100 միլիոն տոլարի նոր վարկ ստանալ Ռուսաստանէն: Այս մասին «Ռիա Նովոստի» գործակալութեան ըսած է ՌԴ-ի Հայաստանի դեսպան Վարդան Տոդանեան:

Հայաստանի կառավարութիւնը արդէն իսկ հաւանութեան արժանացուցած է համապատասխան համաձայնագիրը, սակայն ստորագրման օրուան համար դեռ համաձայնութիւն տեղի չէ ունեցած, գրած է գործակալութիւնը ու աւելցուցած

է՝ վարկը պիտի ուղղուի սպառազինութիւն ձեռք բերելու: Պայմանաւորուածութեան համաձայն՝ Ռուսաստանը կը տրամադրէ անհրաժեշտ գումարի 90 տոկոսը, իսկ հայկական կողմը կը պարտաւորուի վճարել մնացած 10 տոկոսը:

«Ռիա Նովոստի» գործակալութիւնը կը յիշեցնէ, որ աւելի շուտ Ռուսաստանը Հայաստանին տրամադրած էր 200 միլիոն տոլարի չափով վարկ, որ նոյնպէս օգտագործուած է ռուսական սպառազինութիւն գնելու համար:

## Պաքու-Թիֆլիս-Կարս Երկաթգիծը Կը Յանձնուի Շահագործման

Պաքու-Թիֆլիս-Կարս երկաթգիծը 30-էն Հոկտեմբերի պաշտօնապէս շահագործման յանձնուած է:



Ինչպէս կը հարցորդէ «Արմենիա»-ը, երկաթգիծի շահագործման մեկնարկի արարողութեան մասնակցած են Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ, Թուրքիոյ նախագահ Ռեճէփ Թայիփ Էրտողանը, Վրաստանի վարչապետ Գէորգի Կվիրիկաշվիլին եւ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբայեւ:

Ատրպէյճան, Վրաստան ու Թուրքիա Պաքու-Թիֆլիս-Կարս երկաթգիծի նախագիծի մեկնարկը տուած էին 2007 թուականին: Կազմակերպութիւնը, որ այն պէտք է շահագործման յանձնուէր 2012 թուականին, սակայն այն հնարաւոր եղաւ աւարտին հասցնել միայն 2017 թուականին:

## HRW. Եւրոպան Պետք է Համախմբուի Ատրպէյճանին Հակադրելու Համար

Human Rights Watch միջազգային իրաւապաշտպան կազմակերպութեան Հարաւային Կովկասի բաժնի տնօրէն Կիրիլի Կոկիան անդրադառնալով Եւրոպայի խորհուրդի նախարարներու կոմիտէի Ատրպէյճանի հանդէպ կատարուած զգուշացման, նշած է, որ խաղաղութիւնը այս հարցի պարագային բարձր է, քանի որ Ատրպէյճանը կը սպառնայ հեռանալ Եւրոպայի խորհուրդէն:

Սակայն, Կոկիան խորհուրդ կու տայ նախարարներու կոմիտէին Պաքուի սպառնալիքներուն եւ

ճնշումներուն տեղիք չտալ: «Հակառակ 2014-ի Մայիսին Եւրոպայի խորհուրդի կոշտ դատաւճիռին, ռիսկալի իշխանութեան շնորհիւ Մամետովը մնաց բանտը: Amnesty International միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը վերջինիս ձանձնեց որպէս խղճի բանտարկեալ: Պետութիւնները պէտք է համախմբուին ու վերջ դնեն Ատրպէյճանի արհամարհական կեցուածքին եւ արդարութեան ծաղրանքով վերաբերուելուն», - գրած է Կիրիլի Կոկիան:

### Երեւանի Մէջ Աւարտած Է Եւրասիական Միջկառավարական Խորհուրդի Ընդլայնուած Կազմով Նիստը



Եւրասիական տնտեսական միութեան անդամ 5 երկիրներու վարչապետներն մասնակցած են Եւրասիական միջկառավարական խորհուրդի հերթական նիստին, Երեւանի «Մուլթի Կրանտ» հիւրանոցային համալիրին մէջ:

Օրակարգին մէջ ընդգրկուած էին եւրասիական տարածքին վարորդական իրաւունքներու ընդհանուր կանոններու, նաւթի, կազի ընդհանուր շուկայ ստեղծելու եւ այլ հարցեր, լրագրողներուն յայտնած է Հայաստանի նախկին վարչապետ, ներկայիս Եւրասիական տնտեսական յանձնաժողովի անձնակազմի նախագահ Տիգրան Սարգսեան:

«Օրակարգի բոլոր հարցերը քննարկուել են եւ ընդունուել են համապատասխան որոշումներ», - նշած է Հայաստանի նախկին վարչապետը, շարունակելով - «Շատերին հետաքրքրում է վարորդական իրաւունքների հետ կապուած հարցը եւ այդ կապակցութեամբ համակարգային մօտեցումը հետեւեալն է՝ մենք նախապատրաստուել ենք համաձայնագիր ընդհանուր կանոնների մասին, որովհետեւ վարորդական իրաւունքների հարցում տեղի են ունենալու հիմքային փոփոխութիւններ, կապուած նրա հետ, որ ստեղծուում են նոր տեսակի մեքենաներ, որոնց վերաբերել վարորդները պէտք է նոր գիտելիքներ ունենան: Քննարկուել է նաեւ նաւթի, նաւթամթերքի ու կազի ընդհանուր շուկայ ստեղծելու հարցը: Քննարկել ենք, թէ

ինչպէս է տեղի ունենալու նաւթի, կազի տեղափոխումը, որպէսզի այդ ոլորտներում բնական մոնոփոլիաների առկայութեամբ ստեղծենք հաւասար մրցակցային պայմաններ, ինչպէս նաեւ ստեղծենք մեխանիզմներ, թէ ինչպէս են նաւթն ու կազը վաճառուելու երրորդ երկրներ եւ արդեօք հնարաւոր կը լինի գների ընդհանուր քաղաքականութիւն վարել: Քննարկուել է նաեւ շաքարի ընդհանուր շուկայ ձեւաւորելու հարցը»:

Խորհուրդի նեղ կազմով հանդիպումը, որ փակ էր լրատուամիջոցներուն համար, տեւած է շուրջ երկու ժամ, անկէ ետք ընդլայնուած կազմով նիստին Հայաստանի վարչապետ Կարէն Կարապետեան անդրադարձած է ելեկտրոնային համակարգերու ներդրման կարեւորութեան, ինչպէս նաեւ երթեւեկութեան ենթակառուցումը քննարկուած զարգացման անհրաժեշտութիւնը:

Նիստի աւարտին ստորագրուած են տարբեր ոլորտներու մէջ ԵԱՏՄ անդամ պետութիւններու փոխգործակցութիւնն ամրագրող փաստաթուղթեր, մասնաւորապէս՝ ԵԱՏՄ ներքին շուկային մէջ 2018-2019 թուականներուն սահմանափակումներու վերացման ուղղուած միջոցառումներու ծրագրի ճանապարհային քարտեզին մասին կարգադրութիւնը, «Ապրանքներու տեղաշարժի վերահսկողութեան ուղղութեամբ լրացուցիչ միջոցառումներու հարցին մասին» յանձնարարականը եւ այլն:

### Պարու Բողոքի Գիր Յղած Է

Շարունակուած էջ 1-էն

ցի պատգամաւոր Մարիա Քրիստինա Թերեզա Գարսիա Պուալոն եղած էր Մեքսիքայի մայրաքաղաքին մէջ Ատրպէյճանի նախկին նախագահ Հեյտար Ալիեւի արձանը ետ վերցնելու ի նպաստ պայքարողներէն էր:

Ալիեւի Պրոնգէ արձանը Մեք-

սիքոյի մէջ տեղադրուած էր Ատրպէյճանի դեսպանատան ջանքերով, որ գումարներ յատկացուցած էր քաղաքի այդ շրջանը եւ զբօսայգիին բարեկարգելու համար: Իրաւապաշտպաններու բողոքներէն յետոյ, որոնք կը շեշտէին, որ բռնապետը արժանի չէ տուեալ վայրին մէջ արձան ունենալու պատուին, այն հանուեցաւ:

### «ՅԺ». Սերժ Սարգսեան կը Նախագուշացնէ՞ Կարէն Կարապետեանը



«Հայկական ժամանակ» թերթը կը գրէ. «Վարչապետ Կարէն Կարապետեանը երէկ չէր ներկայացել Աժ-կառավարութիւն հարցուպատասխանին, բայց սա չիսանգարեց Աժ «Ելք» խմբակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեանին՝ բաւականին հետաքրքիր հարցուպատասխան ունենալ նրա հետ:

Փաշինեանն ասաց. «Վերջերս մամուլում լուրեր հրապարակուեցին, թէ Սերժ Սարգսեանը եւ Կարէն Կարապետեանը հանդիպել են եւ պայմանաւորուածութիւն ձեռք բերել, որ 2018-ի Ապրիլին Սերժ Սարգսեանը կը ստանձնի վարչապետի պաշտօնը, իսկ Կարէն Կարապետեանը՝ փոխվարչապետի: Փաշինեանը վարչապետ Կարապետեանին խնդրեց տեղեկացնել՝ ճիշդ են այդ լուրերը, թէ ոչ, որովհետեւ «չատերը Ձեզ փորձում էին ներկայացնել որպէս փոփոխութիւնների աւետաբեր, եւ այս հարցի պատասխանից է կախուած» փոփոխութիւնների աւետաբեր էք, թէ ճակատագրական մոլորակները»:

Դժուար է ասել, թէ Կարէն Կարապետեանը երբ կ'անդրադառնայ Փաշինեանի այս հարցադրմանը, բայց քանի դեռ չի շատակուած լուրերը չեն հաստատուել, թեման մնում է ներքաղաքական կեանքի հիմնական ինթրիկը: Աժ եւ քաղաքական քուլիսներում, լրագրողական շրջանակներում արդէն բաւական ժամանակ լուրեր են պտտուում, թէ Աժ ՀՀԿ-ական պատգամաւորների շրջանում աքթիւ լուպիլինկի աշխատանքներ են տարուում, եւ ինչ-որ ուժեր փորձում են ՀՀԿ գործող պատգամաւորներին համոզել, թէ 2018 թուականի ՀՀ վարչապետի իրենց թեկնածուն պէտք է լինի գործող վարչապետ Կարէն Կարապետեանը: Որպէս այս փրոցէսի հովանաւոր նշուում է ուսաստանահայ միլիարտատէր Սամուէլ Կարապետեանի անունը, որի եղբայրը Աժ ՀՀԿ խմբակցութեան անդամ է՝ պատգամաւոր Կարէն Կարապետեանը: Թէ ինչքան են այս լուրերը համապատասխանում իրականութեանը, դժուար է ասել: Հնարաւոր է սա բամբասանք է, հնարաւոր է՝ իրականութիւն:

Բայց ամենահետաքրքիրն այն է, որ Սերժ Սարգսեանը, այնուամենայնիւ, արձագանգում է այդ լուրերին՝ իր որոշ գործողութիւններով:

Վերջին մէկ ամսուայ ընթացքում նա նախ այցելեց ՀՀ քննչա-

կան կոմիտէ՝ ելոյթ ունենալով եւ դիտողութիւններ անելով ՀՀ քննչական էլիտայի առաջ, դրանից յետոյ ոստիկանութեան քոլեկիայի նիստին մասնակցեց նոյն ոճով: Այս այցերի կարեւորագոյն քոնթէքսթը ներքաղաքականն է: Ներիշխանական ինթրիկների մթնոլորտում Սարգսեանը փորձում է ցոյց տալ, որ տիրապետում է երկրի իրաւական-ուժային լծակներին, միւս կողմից ոստիկանութիւնում եւ քննչականում լինելով, փորձում է «մուշտարու աչքով» գնահատել դրանցում տիրող մթնոլորտը, հասկանալ իրենց անելիքը լաւ են պատկերացնում Քննչական կոմիտէի ղեկավար Աղուան Յովսէփեանն ու Ոստիկանութեան պետ Վլատիմիր Գասպարեանը, թէ՞ նրանց թոշակի ուղարկելու ժամանակն է:

Ի դէպ, կանխարգելիչ նման միջոցառումներ ՊՆ-ում Սարգսեանը դեռ մի տարի առաջ էր սկսել իրականացնել: Նախ նա Պաշտպանութեան նախարար նշանակեց իր երկարամեայ մերձաւոր Վիգէն Սարգսեանին, իսկ արդէն այս տարուայ Մայիսին նախարարի առաջին տեղակալ նշանակեց Աժ արտաքին շարաբերութիւնների յանձնաժողովի նախագահ, ՀՀԿ խմբակցութեան անդամ Արտակ Զաքարեանին, որը թերեւս ապացուցել է իր հաւատարմութիւնը Սարգսեանին: Պաշտպանութեան փոխնախարար նշանակուեց նաեւ նոյն չափանիշին համապատասխանող մէկ այլ ՀՀԿ-ական պատգամաւոր Աժ կրթութեան եւ գիտութեան հարցերի յանձնաժողովի նախագահ Արտակ Դաւթեանը:

Զինուած ուժերի մասով Սարգսեանը կարող է իրեն հանգիստ զգալ յայտնով, իսկ ԱԱԾ տնօրէնի պաշտօնում իր երկարամեայ օգնական Կէորիկ Կուտոյեանն է:

Ընդ որում, հետաքրքիր է, որ Սարգսեանը անընդհատ խօսում է երկարաժամկէտ ծրագրերից՝ 18 թուին սա ենք անելու, առաջիկայ հինգ տարում սա ենք անելու... Ընդ որում, սա ասում է նաեւ ուժայինների առաջ խօսելիս: Այսպիսով, Սերժ Սարգսեանը պատրաստուում է 2018 թուականին վարչապետի պաշտօնը ստանձնելուն: Իսկ Կարէն Կարապետեանը Աժ ամպիոնից դեռ երեք ամիս առաջ յայտարարեց, որ ինքն է հաւակնում այդ պաշտօնին: Այնպէս որ՝ նա երկար պէտք է մտածի Փաշինեանի հարցին պատասխանելուց առաջ»:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՇՈՒԻ ՇԱՄԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՇԵՆԱԳՆԵԼ (626) 797-7680**

**SYRIAN ARMENIAN RELIEF FUND**

**Save Support Sustain**

Syrian Armenian Relief Fund  
P. O. Box 1948  
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianrelieffund.org

### Պոլսոյ Հայոց Պատրիարքի Ընտրութեան «Նախաձեռնարկ Սարմնի» Երեք Անդամներ Զրաժարական Տուած են

Պոլսոյ Հայոց պատրիարքի ընտրութիւններու կազմակերպմամբ զբաղուող Նախաձեռնող խումբի երեք անդամ հրաժարական տուած են ինչպէս կը հաղորդէ «Արմէնբրէյս»-ը, այս մասին կը յայտնէ Պոլսոյ հայկական «Ակօս» պարբերականը:

Նախաձեռնող խումբէն հեռանալու մասին յայտարարած են խումբի ղեկավար Սարգիս Քիւլեկէշը, անդամներ Անթօ Քիոսետաղը եւ Հաչիկ ձանէլը: Ուշագրաւ է, որ այս հրաժարականները յաջորդած են Պոլսոյ նահանգապետ Վասիփ Շահինի հետ հանդիպման:

Պոլսոյ Հայոց պատրիարքարանի կրօնական ժողովի ատենապետ Սահակ եպիսկոպոս Մաշալեան, Արամ արքեպիսկոպոս Աթէշեանը, Սուրբ Փրկիչ ազգային հիւանդանոցի հոգաբարձուներու խորհուրդի ատենապետ Պետրոս Շիրինօղլուն, ինչպէս նաեւ պատրիարքական ընտրութեան Նախաձեռնող խումբի ղեկավար Սարգիս Քիւլեկէշ 24 Հոկտեմբերին պաշտօնապէս այցելած են Պոլսոյ նահանգապետարան՝ հանդիպելով նահանգապետ Վասիփ Շահինի հետ:

«Արմէնբրէյս»-ի հետ զրոյցի

ժամանակ «Ակօս» պարբերականի հայերէն բաժնի խմբագիր Բագրատ Էստուկեան յայտնած էր, որ ըստ իրենց հասած տեղեկութիւններուն՝ նահանգապետը ըսած է, որ չի ճանչնար Գարեգին արքեպիսկոպոս Պէքճեանի՝ պատրիարքական տեղապահ ընտրուելու փաստը: Առաջարկուած է 2 հոգեւորականի՝ Արամ արքեպիսկոպոս Աթէշեանին եւ

Սահակ եպիսկոպոս Մաշալեանին միասնաբար այս գործընթացը սկսիլ սկիզբէն:

Գարեգին արքեպիսկոպոս Պէքճեան հանդիպման ներկայ չէ եղած, ան այս օրերուն Գերմանիա է: Այդուհանդերձ, Պէքճեանը յայտարարութիւն տարածած է նահանգապետարանին մէջ տեղի ունեցած հանդիպման վերաբերելով:

Յայտարարութեան մէջ պատրիարքական տեղապահը յայտնած է, որ կարճ ժամանակէն պիտի վերադառնայ Պոլիս՝ ստանձնելու իր պարտականութիւնները: Ան յոյս յայտնած է վերադառնալէն ետք անձամբ հանդիպիլ նահանգապետի հետ եւ պատրիարքի ընտրութեան հարցի վերաբերելու տեսակէտները անձամբ փոխանցել անոր:

### 14 Ծերակուտականներ ԱՄՆ Նախագահէն կը Պահանջեն Թուրքիոյ Հանդէպ «Կարծր Ըլլալ»



Ծերակուտականներ ճոն Սըք Քէյն եւ Բապըթ Սեննետեզ

14 ծերակուտականներու ստորագրութեամբ նախագահ Տանըլտ Թրամբին Թուրքիոյ վերաբերեալ նամակ ուղարկուած է, ուր կոչ կ'ընեն աւելի խիստ դիրքորոշում որդեգրել պաշտօնական Անգարայի հանդէպ:

Ամերիկացի ծերակուտականներ նախագահ Տանըլտ Թրամբէն պահանջած են Թուրքիոյ նկատմամբ »կարծր« դիրքորոշումներ ունենալ:

Այս մասին կը յայտնէ «Sputnik»-ը նշելով, որ այս առթիւ ծերակուտականներ ստորագրուած նամակ մը յղած են Սպիտակ Տուն: Սոյն նախաձեռնութեան հեղինակ ծերակուտականներէն կը յիշատակուին Պարնի Սենտէրսի եւ ձոն ՄըքՔէյնի անունները:

Նամակին մէջ ԱՄՆ-ի նախագահի ուշադրութիւնը հրաւիրու-

ուած է այն փաստի վրայ, որ Թուրքիոյ մէջ տեղի կ'ունենան շարք մը անօրինականութիւններ:

«Անընդունելի է, որ Թուրքիոյ կառավարութիւնը կամայականօրէն մարդոց կը ձերբակալէ, կ'ոտնահարէ անոնց իրաւունքները. մասնաւորապէս խօսքը կը վերաբերի մեր դիւանագէտներուն եւ անոնց ընտանիքներուն», - ըստուած է նամակին մէջ:

Նշուած եղած է, որ Թուրքիոյ իշխանութիւնները օգտագործելով երկրի մէջ գործող արտակարգ դրութիւնը, կը սահմանափակեն երկրի մէջ խօսքի ազատութիւնը, դատաիրաւական համակարգի անկախութիւնը, ինչպէս նաեւ կը լռեցնեն երկրի ընդդիմութեան: Ընդգծուած է, որ Թուրքիոյ մէջ ժողովրդավարութիւնը լուրջ սպառնալիքի տակ է:

**ՍԱՏԱՐԵՆՔ ՄԵՐ ԱԶԳԻ ԼԱԻԱԳՈՅՆ ԶԱՒԱԿՆԵՐԻՑ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՊԱՆԵԱՆԻՆ**

**Ձեր բարի սատարունք ինձ ուժ է տալիս: Ընդհակալ եմ բոլորիդ: Զգացված եմ:**

Ֆրանսիայում մահացու քաղցկեղի դէմ մեծագոյն հաւատքով, յամառօրէն պայքարող ազնուագոյն հայ մտաւորական Սարգիս Հայկապետեանի առողջացման գերմարդկային ջանքերին սոսկ բարոյապէս սատարունք անհրաժեշտ բայց ոչ բաւարար է:

Նա ունի չորս հոգուց բաղկացած ընտանիք: Հայկապետեանին նաեւ նիւթապէս աջակցելու նպատակով նրա ընկերներն Ֆրանսիայում իր անունով բանկային հաշիւ են բացել

**Սատարենք Սարգիս Հայկապետեանին:**

CREDIT AGRICOLE BANK (FRANCE)  
 Mr. Sarkis HATSPANIAN  
 Account number : 7284076980  
 Bank : 14506  
 IBAN Number : FR76 1450 6000 0872 8407 6978 034  
 Adress of Bank : 37, rue Jean Jaures – 42700 FIRMINY (France)  
 Agency of Firminy (Loire-Haute Loire)  
 BIC Number : AGRIFRPP845

**Nourish your hair with natural products**

**www.GarniUSA.com**  
**Pasadena, CA 91102, USA**

### Հրապարակային Քննարկում Նուիրուած Հայրենիք-Սփիւռք Երդ Համաժողովին



Կազմակերպութեամբ Նոր Սե- րունդ Մշակութային Միութեան, անցեալ Զորեքշաբթի, Հոկտեմբեր 25, 2017, տեղի ունեցաւ «Հայաս- տան-Սփիւռք Երդ Համաժողովը» նիւթին շուրջ հրապարակային քննար- կում մը, Կլենտէյլի Հանրային գրա- դարանի հանդիսասրահին մէջ:

ՆՄՄՄ-ի վարչութեան ատենա- պետ Յարութ Տէր Դաւիթեան, իր բացման խօսքին մէջ անդրադարձաւ վերջերս Երեւանի մէջ գումարուած Հայաստան-Սփիւռք Երդ Համաժողովին մասին, որուն ներկայ եղած էին շուրջ 1800 հրաւիրեալներ: Շեշտեյլ էտք նիւթին կարեւորութիւնը ըն- թացք տուաւ անոր քննարկումին:

Սոյն հանրային միջոցառու- մին իր տպաւորութիւններն ար- տայայտեցին Հայրենիք-Սփիւռք Երդ Համաժողովին մասնակցողներէն Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի ատենապետ Գրիգոր Խոտանեան, Հ.Յ.Դ. պաշտօնաթերթ «Ասպա- րէզ» օրաթերթի խմբագիր Աբօ Պողոյեան, ՌԱԿ-ի պաշտօնաթերթ «Նոր Օր»-ի փոխ խմբագիր Յակոբ Մարտիրոսեան եւ անկախ գործիչ՝ Յարութ Պրոնոգեան:

Քննարկումի չորս մասնա- կիցներն ալ 10-12 վայրկեան սահ- մաններուն մէջ, իրենց տպաւորու- թիւններն արտայայտեցին վերո- յիշեալ համաժողովին մասին:

Յարգելի գեղուցաբերները իրենց գնահատականներն ու մտահո- գութիւնները յայտնեցին համաժողովի կայացման մասին: Դրական երե- ւոյթներու վերաբերեալ իրենց տպա- ւորութիւնները յայտնելէ ետք անդ- րադարձան հայութիւնը յուզող կեն- սական տարբեր հարցերու շուրջ (հայապահպանում, ցեղասպանու- թեան ճանաչում, արտագաղթ, Ար- ցախի հիմնահարցի լուծում, եւայլն):

Արդարեւ գիտաժողովի նմա- նող սոյն համախմբումը աւարտին հրապարակուած էր յատուկ հռչա- կագիր մը որուն անդրադարձ եղան եւ քննարկուած նիւթերու մասին, առանց յանգելու լուծումներու:

Վերոյիշեալ հանդիպման աւարտին ներկաներու կողմէ եղած է կարծիքներու արտայայտու- թիւններու եւ մտահոգութիւններ ու առաջադրանքներ մեր ժողովուրդը յուզող կենսական հարցերու կապակցութեամբ:

### Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովուապետական Այցը

Շարունակուած էջ 1-էն

**Հրաշափառի Արարողութիւն**  
Երեկոյեան Սրբոց Ղեւոնդ- եանց առաջնորդանիստ մայր եկե- ղեցույ մէջ տեղի ունեցաւ Հրաշա- փառի արարողութիւն՝ ներկայու- թեամբ թեմի հոգեւոր դասի եւ բազմաթիւ հաւատացեալներու, քոյր եկեղեցիներու ներկայացուցիչնե- րու եւ պետական այրերու:  
Հաւատաւոր ժողովուրդին ուղղուած խօսքին մէջ Նորին Սրբու-

Հանդիպման աւարտին վեհա- փառը նուէրներ փոխանցեց դպրոց- ներուն, աշակերտներուն եւ ման- կավարժներուն:

**Հայրապետական Ս. Պատարագ Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ**  
Կիրակի, Հոկտեմբերի 29ին, Ս. Ղեւոնդ Մայր Տաճարի մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը մատուցեց Սուրբ պատարագ: Ներկայ էին թեմի հո-



թիւնն իր շնորհաւորանքներն ու բարեմաղթանքները բերաւ թեմի հաստատման 90-ամեակի առիթով՝ գնահատելով ամերիկահայութեան ձեռքբերումներն ու յաջողութիւն- ները համայնքի ազգային-եկեղե- ցական կեանքին ներս:

Վեհափառ Հայրապետը ամե- րիկաբնակ հայորդիներուն մաղ- թեց Աստուծոյ ամենաառատ շնորհ- ներն ու օրհնութիւնները՝ յորդո- րելով, որ աստուածահաճոյ կեանք- քով, անսպառ եռանդով, ազգային ու հոգեւոր կեանքի բարօրութեան ու պայծառութեան տեսլականով շարունակեն եկեղեցաշէն ու ազգօ- գուտ գործերը:

Հրաշափառի արարողութեանէն ետք հաւատացեալները մօտեցան Հայրապետի Աջը համբուրելու եւ Նորին Սրբութեան օրհնութիւնը ստանալու:

### Հանդիպումներ Շաբաթօրեայ եւ Կիրակօրեայ Դպրոցներու եւ Հայ Վարժարաններու Աշակերտութեան Հետ

Հոկտեմբերի 27-ին, Ս. Ղե- տնդեանց եկեղեցիին մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կա- թողիկոսը հանդիպում ունեցաւ շա- բաթօրեայ եւ կիրակօրեայ դպրոց- ներու, ինչպէս նաեւ հայ վարժա- րաններու աշակերտութեան հետ: Վեհափառը դիմաւորուեցաւ Հայ- րապետական Մաղթանքի երգեցո- ղութեամբ ու խանդավառ ծափող- ջոցներով:

Սաները հանդէս եկան գեղար- ուեստական կատարումներով, հայ- րենասիրական երգ ու պարով: Այնուհետեւ Հայրապետը իր օրհ- նութիւններն ու մաղթանքները տալով ի մէջ այլոց ըսաւ. «Հա- յաստանը Սուրբ էջմիածինը դուք էք, սիրելիներ, ձեզնով է հզօրա- նալու հայինիքը, շենանալու ազ- գային եկեղեցական կեանքը»:

գեւոր դասը, թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արքի. գլխաւո- րութեամբ, ինչպէս նաեւ պետական եւ այլ պաշտօնական մարմիններու ներկայացուցիչներ:

Իր քարոզին մէջ վեհափառ Հայրապետն անդրադարձաւ օր- ուան խորհուրդին՝ խաչին նշանա- կութեան, մեր ժողովուրդին անց- եալին եւ ներկային ու ամերիկա- հայութեան կեանքին մէջ: Գարե- գին Բ. շեշտեց որ առկայ դժուա- րութիւններն ու խնդիրները յաղ- թահարելի են առ Աստուած ապա- ւինութեամբ, խաչի խորհրդով ու զօրութեամբ: Ան նաեւ գնահատեց Հայրենիքին, Սուրիահայ եւ իրա- քահայ մեր եղբայրներուն ու քոյ- րերուն ամերիկահայութեան կողմէ ցուցաբերուող զօրակցութիւնը:

Նոյն օրը երեկոյեան տեղի ունեցաւ պաշտօնական ճաշկերույթ, որուն ներկայ էին հոգեւորական- ներ, Լոս Անճելոսի, քաղաքապետ էրիք Կարաէթին, ԱՄՆի Հայաստ- նի դեսպան Գրիգոր Յովհաննե- նէսեան, պետական անձնաւորու- թիւններ, բարերարներ եւ հաւա- տացեալներ:

Ճաշկերույթի ընթացքին ցու- ցադրուեցան Արեւմտեան թեմի 90-ամեակին նուիրուած շարժա- պատկեր մը եւ տեսաֆիլմ մը Հարիճափանքի Թրփանճեան ըն- ծայարանի մասին:

Աւարտին վեհափառ Հայրա- պետը իր խօսքն ու պատգամը ուղղեց ներկաներուն շնորհաւորելով եւ բարեմաղթութիւններ փոխան- ցելով ԱՄՆի արեւմտեան թեմի հաստատման 90-ամեակին կապակց- ութեամբ: Այս առթիւ վեհափառը գնահատելով Թրփանճեան ընտա- նիքին ազգանուէր եւ եկեղեցան- ուէր մեծ վաստակը Տիար Ժիրայր Թրփանճեանին շնորեց «Ասպետ Սուրբ էջմիածնի» հայրապետա- կան բարձր շքանշանը:

TO THE LEBANESE DIASPORA

**REGISTER TO VOTE**  
IN THE PARLIAMENTARY ELECTIONS 2018

before November 20, 2017

- ▶ [www.diasporavote.mfa.gov.lb](http://www.diasporavote.mfa.gov.lb)
- ▶ the mobile app "MOFA ONLINE"
- ▶ the Lebanese diplomatic missions

SHAPE YOUR COUNTRY'S FUTURE

REPUBLIC OF LEBANON  
Ministry of Foreign Affairs and Emigrants

LebaneseDiasporaVote

[www.massispost.com](http://www.massispost.com)  
daily news updates

### ՏԻԳՐԱՆ ՊԱՍԿԵԻԻՉՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ Է ՆՈՐ ՖԻԼՄԸ «ՎԵՐՉԻՆ ԵՐԱԳԱՆՔ ԿԱՍ GAME OVER»



4. Նշել Հայաստանի անկախութեան հարիւրամեակը՝ հրապարակային տօնակատարութիւններով, ինչպէս նաեւ Կիրակի Մայիս 28, 2018ին՝ Հայ Ալետարանական եկեղեցիներու մէջ տեղի ունեցող առաւօտեան պաշտամունքներու ընթացքին.

5. Ուղարկել պատուիրակութիւն մը ՀԱՀԽ-ի կողմէ դէպի Հայաստան, 2018 Մայիս ամսուայ 28ին՝ մասնակցելու համար Հայաստանի Հանրապետութեան հարիւրամեայ տարեդարձի տօնակատարութեանց:

#### Յայտարարութիւն Ամերիկայի Հայ Ալետարանական Ընկերակցութեան Հարիւրամեայ Տարեդարձի Առիթով

Յառաջիկայ տարուան Յունիսին Ամերիկայի Հայ Ալետարանական Ընկերակցութիւնը պիտի նշէ իր 100րդ տարեդարձը: Հարիւրամեայ տօնակատարութիւնները արդէն սկսած են՝ հանգանակութեան արշաւներով, որոնք տեղի կ'ունենան տարբեր վայրերու մէջ: Ծրագրուած է նաեւ 2018 տարեշրջանին զանազան տօնակատարումներ տեղի ունենան Հայաստանի եւ Սփիւռքի մէջ:

Անտարակոյս աստուածային նախախնամութեան ձեռքն էր, որ առաջնորդեց խումբ մը հայ ալետարանականներ հիմնելու Ալետարանական Վուսթրը քաղաքի Հայ Ալետարանական Եկեղեցւոյ մէջ՝ Ամերիկայի Հայ Ալետարանական Արեւելեան Նահանգներու Միութեան տարեկան համաժողովի ընթացքին, Յունիս 7-9, 1918 թուականին:

Շուրջ հարիւր տարիներէ իվեր Ալետարանականը ի սպաս դրած է իր հոգեւոր, կրթական, մշակութային եւ մարդասիրական ծառայութիւնները հայ ազգին համար: Հազարաւոր մարդիկ, սերունդէ

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՒ ՀԻՒՐԸՆԿԱԼՈՒԹԻՒՆ ՊՈԼՍԱՀԱՅ ԵՐԳՉՈՒՅԻ ՍԻՊԻԼԻՒՄ ԵՒ ԵՐԳԻՉ՝ ԱՆՏՐԻԻ ՀԵՏ



#### ՍԱՐԻԹ ՕՐԱՆԵՍ

Երկուշաբթի Հոկտեմբեր 16, 2017 երեկոյան ժամը 7:30ին, Պոլսահայ Միութիւնը հրաւիրած էր անուանի երգչուհի Սիպիլիւն ու երգիչ Անտրէն, Միութեան «Հրանդ Տինք» դասախօսական սրահը, հարցազրոյցի եւ ընդունելութեան երեկոյի մը համար, ուր հրաւիրուած էին նաեւ Համազգային Մշակութային Միութեան եւ մամուլի ներկայացուցիչներ, Միութեան անդամներ եւ բարեկամներ:

Բացման խօսքով բարի գալուստ մաղթեց Միութեան Ընդհանուր Ժողովի ատենապետ՝ Սիմոն Աճըրիաշ, որ շնորհակալութիւն յայտնեց հիւրերուն եւ երգիչներուն սոյն հրաւերը չմերժելուն համար, նշելով որ ասիկա ընտանեկան հաւաքոյթի բնոյթ ունի մտերմիկ շրջանակի մէջ:

Ան յաջողութիւն մաղթեց Կիրակի օրուան կայանալիք համերգին, որակելով զանհիկա իբրեւ զաղոթային համերգ: Նիո Շորքէն, Պոսթօնէն եւ Շիքակոյնէն ետք, Սի-

պիլ կը գտնուի Լոս Անճէլըս: Սիպիլի իր ուրախութիւնն յայտնեց Պոլսահայ եւ Համազգային Միութեանց իրենց համագործակցութեան համար: Ան յայտնեց թէ ձայնագրութիւնները կատարուած են Պոլսոյ մէջ իսկ Անտրէի ձայնագրութիւնները Հայաստանի մէջ, սակայն նկարահանումները կատարուած են միասնաբար: Սիպիլի հարց տրուեցաւ Պոլսոյ մէջ յեղափոխական երգեր երգելու քաջութեան զգացումին ուրկէ՞ եկած ըլլալուն մասին, ան պատասխանեց թէ TRT կայանէն իրեն առաջարկ մը եկած էր տարի մը առաջ, նշանաւոր քլարինէթ նուագողի մը կողմէ, որ կը փափաքէր լրիւ յայտագրին մէջ հայերէն երաժշտութիւն ըլլար: Սիպիլի հաւաքած է հայ երաժիշտներէն հայերէն երգեր որոնք երգուեցան ու ձայնասփռուեցան թրքերէն ենթագրութիւններով եւ այս պարագան պատմութեան անցաւ:

Հարց տրուեցաւ Սիպիլի թէ,

Շար.ը էջ 19

**THE ARARAT-ESKIJIAN MUSEUM**  
Present



**ARMENIAN-SYRIAC CULTURAL RELATIONS AND ARMENIAN TRANSLATION OF SYRIAC LITERARY WORKS**

A TALK BY  
**ONNIK KIREMITLIAN**  
PhD candidate in the Oriental Institute of the Catholic University of Louvain, Louvain-la-Neuve, Belgium

**Sunday November 5<sup>th</sup>, 2017, 4:00 p.m.**  
**Ararat-Eskijian Museum – Sheen Chapel**  
15105 Mission Hills Road, Mission Hills, CA

Armenian-Syriac political, commercial and cultural relations were developed in the early period of the Christian era, to the extent that many kings of the Syriac kingdom of Osroene adjacent to the Southern border of historic Armenia, starting from early 2<sup>nd</sup> century were Armenian in origin. Since the earliest periods of the introduction of Christianity into Armenia, alongside the Greek-speaking Hellenic branch, Syriac Christianity had an important and formative influence in shaping the earliest period of the ascending new religion in Armenia. In the pre-alphabet oral period of preaching Christianity in Armenia, Syriac played an important role as a medium through which biblical teachings and liturgical doctrine were transmitted to the populace untrained in the new faith. Thus also vast terminology relating to commercial and religious spheres passed into Armenian language in this period. After the founding of the Armenian alphabet, the Bible was initially translated from Syriac, traces of which can be found in some Armenian extant manuscripts. In the Golden age of Armenian literature of the fifth century many Syriac works were translated, a sizeable amount of which remain lost to posterity, and are preserved only in Armenian. We witness the same surge in ecclesiastical rapprochement and close-cultural contacts between the Armenian and Syriac churches in subsequent centuries, especially during the Silver age of the Armenian literature which flourished in the Cilician Kingdom of Armenia in the 11-14<sup>th</sup> centuries. In this period we find fruitful collaborative translation activity from Syriac into Armenian, where notable figures, such as Catholicos Gregory II the Martyrophile († 1105), Catholicos Nerses IV the Gracious († 1173) champion of Church unity, the erudite polyglot Nerses Lambrontsi († 1198), as well as the prolific scholar Vartan Areveltsi († 1271) enriched the Mediaeval Armenian literature with precious new translations from Syriac, as a result saving many subsequently lost Syriac works from irretrievable loss.

Onnik Kiremitlian is currently a PhD candidate in the Oriental Institute of the Catholic University of Louvain, Louvain-la-Neuve, Belgium, and is in the advanced stage of completing his research thesis on the Armenian and Syriac writings of the 7<sup>th</sup> c. Syriac church father Marutha of Tagrit.

Admission free (donations appreciated).  
For more information about this program, contact Ararat-Eskijian Museum at (747) 500-7585 or [Ararat-eskijian-museum@netzero.net](mailto:Ararat-eskijian-museum@netzero.net).

### ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԵՔՍԻՔՈՅ ԹԵՄԸ



Հայ Առաքելական Եկեղեցուց Մեքսիքոյ Թեմը ստեղծուեցաւ՝ իր կրօնական եւ ազգային առաքելութիւնը իրագործելու Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի իրաւասութեան տակ: Մեքսիքոյի Թեմի ստեղծումը իրականացաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական պաշտօնական կոնդակով (Թիւ 877), Նոյեմբեր 21, 2014 թուականին:

Իր պաշտօնական կոնդակին մէջ, Ամենայն Հայոց Կաթողիկոսը կը գրէ. - «Այսօր հրամայական է առաւել մեծ հոգեւոր խնամք ու հոգատարութիւն մատուցանել Մեքսիքայում բնակեալ մեր ժողովրդի գաւակներին: Այս առումով, ընդառաջելով Ամերիկայի Միացեալ Նահանգների Հայոց Արեւելեան եւ Արեւմտեան Թեմերի խնդրանքին եւ հաշուի առնելով Մեքսիքայի եւ Գալիֆորնիայի Հայ Համայնքների փոխարկարձ սերտ առնչութիւնները եւ Մեքսիքայի աշխարհագրական դիրքի նպատակայարմարութիւնը, Հայրապետական այսու կոնդակով, Մեքսիքայի Հայ Համայնքները առանձնացնում ենք ԱՄՆ Հայոց Արեւելեան Թեմից եւ ընդգրկում ԱՄՆ Հայոց Արեւմտեան Թեմի կազմի մէջ»:

2015ի Մարտ ամիսին, Արեւմտեան Թեմի Առաջնորդը՝ Գերշն. Յովնան Արք. Տէրտէրեան, թեմական Բարերարներու պատուիրակութեամբ մը, այցելեց Մեքսիքո քաղաքը՝ պաշտօնապէս Յիշատակելու համար 1915ի Հայոց Ցեղասպանութիւնը: Կիրակի, Մարտ 15, 2015ին, Հայ-Մեքսիքական Համայնքին անդամները եւ Գալիֆորնիայի ժամանած պատուիրակութիւնը, համատեղ, մասնակցեցան Սուրբ Պատարագի մը՝ Մեքսիքոյի Metropolitan Cathedralի մէջ՝ տօնելու Հայոց Ցեղասպանութեան զոհ՝ Նահատակներուն 100ամեակը: Պատարագիչն էր Norberto Rivera Carrera, Մեքսիքոյի Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցուց Առաջնորդ Արքեպիսկոպոս-Կարտինալը: Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեան մասնակից դարձաւ այդ Սբ. Պատարագին, որուն մասնակցեցան նաեւ միջեկեղեցական պաշտօնական ներկայացուցիչներ՝ Անտիոքի Ուղղափառ Եկեղեցուց, Մարոնիթ Եկեղեցուց, Անկլիքան Եկեղեցուց եւ Հրեայ կրօնականներ:

Այդ Սբ. Պատարագը եւ աւելի-թը սփռուեցաւ Մեքսիքոյի լրատուական կայաններով:

Արեւմտեան Թեմին Առաջնորդը, Գերշն. Յովնան Արք. Տէրտէրեան, բազմաթիւ անգամներ հովուական այցելութեամբ գտնուեցաւ Մեքսիքոյի Հայ Համայնքին

ներս: 2015ի Ապրիլին, Սրբազան Առաջնորդը, թեմական պատուիրակութեամբ մը, դարձեալ հոն գտնուեցաւ՝ պաշտօնական բացումը կատարելու Հայոց Ցեղասպանութեան նուիրուած Յուշահանդէսի մը, որ տեղի ունեցաւ Մեքսիքո Մայրաքաղաքի Museum of Toleranceի մէջ:

Կիրակի, Օգոստոս 30, 2015ին, Առաջնորդ Յովնան Տէրտէրեան, Մեքսիքո Մայրաքաղաքին մէջ Սուրբ Պատարագ մատուց Օւր Լադի Մարոնիթ Մարոնիթ Եկեղեցուցի մէջ: Այս Սբ. Պատարագը պատմականօրէն առաջին Հայկական Սբ. Պատարագն էր, որ կը մատուցուէր Մեքսիքոյի հողամասին վրայ:

2017 Յուլիսին, Թեմի Առաջնորդ Սրբազանը, պաշտօնական նամակով մը, Հայ Առաքելական Եկեղեցուց Մեքսիքոյի Թեմին Առաջնորդական Փոխանորդ (Vicar General) նշանակեց Հոգշն. Տ. Սասուն Ծ. Վրդ. Զմրուխտեանը: Այս նշանակումը կատարուեցաւ՝ նկատի առնելով Սպանիոյ մէջ Հայր Սուրբին ունեցած «Աստուծոյ Խօսքը» սերմանելու փորձառութիւնը:

Յունուար 14, 2017ին, Գերշն. Յովնան Արք. Տէրտէրեան, Հովուական Այցելութիւն մը տուաւ Մեքսիքո Քաղաքին Հայ-Մեքսիքական Համայնքին: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանային Հոգշն. Տ. Սասուն Ծ. Վրդ. Զմրուխտեանը, Արժն. Տ. Մանուկ Ա. Քհնյ. Մարգարեանը եւ Տիար Ասատուր Սարաֆեանը: Նոյն օր, Երեկոյեան, տեղի ունեցաւ Բարի Գալտեան հիւրասիրութիւն մը, որուն ագնիւ հիւրընկալն էր Մեքսիքո Քաղաքին Հայ Դեսպանը՝ Վսեմաշուք Արա Ալվազեան:

Իր խօսքին մէջ, Դեսպան Ա. Ալվազեան, յատուկ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդին, Սրբազանին կատարած հովուական այցելին, պաշտօնական առաջնորդութեան, ինչպէս նաեւ իր այցելութեան առաջին օրէն հասարակութեան վրայ թողած դրական ներգործութեան համար:

Մայիս 7, 2017ին, Առաջնորդ Սրբազանը նախագահեց Մեքսիքոյի մէջ Հայաստանի Դեսպանատան պաշտօնական բացումին: Սրբազանին կ'ընկերանային Հոգշն. Տ. Սասուն Ծ. Վրդ. Զմրուխտեան եւ Տիար Ասատուր Սարաֆեան:

Դեսպանութեան եւ Մեքսիքոյի Հայ-Մեքսիքական Հասարակութեան անունով, Առաջնորդ Սրբազանին եւ պատուիրակութեան Բարի Գալտատ մաղթեց Դեսպան Արա Ալվազեան: Պաշտօնական այս բացումին ներկայ էին Բարձրաստիճան անձնաւորութիւններ, որոնց կարգին Արք. Franco Coppola, Մեք-

սիքոյի Պապական Նուիրակը, Մարոնիթ Թեմի էքզարկ George Saad Abi Younes Եպիսկոպոսը, Միացեալ Նահանգներու Մեքսիքոյի նախկին Դեսպան՝ Robert Weisberg, Մեքսիքո-Իսրայէլեան Chamber of Commerceի Նախագահ՝ Meny Samra Cohen, Ռուսաստանի Դեսպան՝ Eduardo Malayan, Մեքսիքոյի Museum of Memory and Toleranceի Նախագահ՝ Sharon Zaga եւ Sonia Arakelian՝ Հիմնադիրը եւ Խնամակալը (Curator) "Armenia: An Open Wound" Հայկական Ցեղասպանութեան նուիրուած Յուշահանդէսին (Մեքսիքոյի Museum of Memory and Toleranceի մէջ):

Հայ-Մեքսիքական Հասարակութեան մէջ իր ցուցաբերած անշահախնդիր նուիրումին, ծառայութեան եւ Հայկական Ցեղասպանութեան արդար ճանաչումին համար տարած աշխատանքներուն փոխարէն՝ Սոնիա Առաքելեան արժանացաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Պատգամին եւ Օրհնութեան: Մեքսիքոյի Թեմին

կան Գիտութեան (ecology), այլեւ կը ճանչցուի այդ գիտութեան մէջ ծառայող միջազգային լաւագոյն մասնագէտներու շարքին

Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեան եւ Դեսպան Ալվազեան հանդիպում ունեցան Claudio Ruiz Gutierrezի հետ, որ Ընդհանուր Ղեկավարն է Մեքսիքո Քաղաքի Արտաքին Յարաբերութիւններու պետական Գրասենեակին: Անոնք հանդիպում ունեցան նաեւ Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցուց Մեքսիքոյի եկեղեցական Գլուխ՝ Արքեպիսկոպոս եւ Պապական Նուիրակ Franco Coppolaի հետ: Թեմիս Առաջնորդը եւ Դեսպանը հանդիպեցան նաեւ Մեքսիքո Քաղաքի Արքեպիսկոպոս Norberto Rivera Carreraiին: Յուլիս ամսուան մէջ կատարած իր այցի ընթացքին, Սրբազանը եւ Դեսպան Ալվազեանը հանդիպեցան Մեքսիքոյի Deputy Interior Minister for Religious Affairsի Նախարար՝ Humberto Roque Villanuevaի հետ, ուր Վեհափառ Հայրապետի Այցելութեան



ներս, Սոնիա Առաքելեան եղաւ առաջին անձը, որ արժանացաւ այսպիսի բարձր գնահատականի եւ պատիւի:

Հոկտեմբեր 4, 2017, Թեմիս Սրբազան Առաջնորդը անգամ մը եւս հովուական այցելութեամբ գտնուեցաւ Մեքսիքո Քաղաք, ուր Դեսպան Տիար Արա Ալվազեանին հետ ունեցաւ շարք մը հանդիպում-ժողովներ, վերջնական կարգադրութիւններ տեսնելու եւ ճշտելու Վեհափառ Հայրապետի առաջին պաշտօնական Այցելութեան հետ կապուած, որ տեղի պիտի ունենայ միօրեայ այցով՝ Հոկտեմբեր 30, 2017ին:

Մեքսիքոյի Հայկական Դեսպանատան մէջ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական կոնդակով պատիւ շնորհուեցաւ նաեւ կենսաբանութեան (biology) մէջ իր յայտնի ներդրումներով ծանօթ՝ Տիար Jose Sarukhanին: Տիար Սարուխանի ոչ միայն ծանօթ է իբր հիմնադիրը Մեքսիքոյի Կենդանա-

հետ թապուած նիւթեր արծարծուեցան:

Վեհափառ Հայրապետին Մեքսիքո ժամանումէն ետք, Հայ Առաքելական Եկեղեցուց Քահանայապետը եւ իր Պատուիրակութիւնը պիտի այցելեն Օւր Լադի Մարոնիթ Մայր Տաճարը, որ Մեքսիքոյի քրիստոնէական ամէնէն սրբազան վայրը կը նկատուի: Նոյն օրը, աւելի ուշ, հիւրասիրութիւն մը կազմակերպուած է ի պատիւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Գարեգին Բ. Կաթողիկոսին, հիւրասիրութեամբ Մեքսիքո Քաղաքին Քաղաքապետ՝ Վսեմաշուք Miguel Angel Mancera Espinosai:

Յաջորդաբար, մասնակցութեամբ Մեքսիքոյի բարձրաստիճան հոգեւորականներու, միջեկեղեցական արարողութիւն մը տեղի պիտի ունենայ Metropolitan Cathedralի մէջ, որու ընթացքին

Շար.ը էջ 17

NATIONAL NOTARY ASSOCIATION NOTARY PUBLIC MEMBER Garine Depoyan 626-755-4773 554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106 ghdepoyan@gmail.com

### ՄԵՔՍԻԿԱՅԻ ՀԱՅԵՐԸ ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԹԻՈՒՄ ԵՆ



#### ԱՆՆԱ ԳԶԻՐԵԱՆ

Երաժիշտներ, հեռուստամեկնաբաններ, կոչիկի, գորգերի արտադրութեամբ զբաղողներ, գիտնականներ. Մեքսիկայում տարբեր ոլորտներում տեղի հայերը առաջատար մասնագետներն են: Մեքսիկայի հայ համայնքը ձեռնարկել է Հայոց ցեղասպանութեանը յաջորդող տարիներին. սկզբնական փուլում Մեքսիկայում հաստատուած հայերի մեծ մասը վերապրածներ էին, որոնք ապաստան էին փնտրում:

Նրանց թուով էին նաև ԱՄՆ մեկնել ցանկացող գաղթականները: Մեքսիկայի հայ համայնքի ներկայացուցիչ, Մեխիկոյի Յիշողութեան եւ հանդուրժողականութեան թանգարանի աշխատակցուհի Սոնիա Առաքելեանի խօսքով, Մեքսիկայում հայերի թիւը տարբեր ժամանակներում տարբեր է եղել, սակայն գրեթէ միշտ հայերը փոքրաթիւ համայնք են ունեցել: Տեղի հայերի թիւն այսօր էլ 1500-ից չի անցնում:

«Նրանցից շատերը եկել են Թուրքիայի տարբեր մասերից՝ Ադանա, Վան, Կարս, Բիթլիս եւ այլ շրջաններ: Այդ տարիներին շատերը զբաղուել են կոչիկի արտադրութեամբ կամ առեւտրով: Իմ մօրական կողմից պապիկը՝ Լեոն Բողոսեանը եւս ունեցել է կոչիկի խանութ, իսկ իմ հօրական կողմից պապիկը՝ Քերոփ Առաքելեանը, սկսել է աշխատել որպէս ատաղձագործ, շուտով փոխել է իր գործը եւ իմ հօր հետ հիմնել երկրում խոշոր խաղալիքների խանութները մէկը՝ «ARA TOY STORES»-ը:

Մեքսիկայում մնացած հայերից շատերը հիմնել են իրենց սեփական գործը: Մեքսիկան իրենց ընդունեց գրկաբաց եւ սեփական կեանքը դասաւորելու հնարաւորութիւն տուեց», - «Արմենյալեան»-ի հետ զրոյցում պատմեց Սոնիա Առաքելեանը:

Ներկայում Մեքսիկայում հայ համայնքը ցրուած է: Հայերի հիմնական մասն ապրում է Մեխիկո քաղաքում: Լինելով ցրուած համայնք՝ այն չի ունեցել դպրոց, մշակուցի տուն, ազգային որեւէ կառուց: Լեզուի պահպանութեան հիմնական պատասխանատուութիւնն ընտանիքներինն է: Նրանք, ովքեր խօսում են հայերէն, դա իրենց տատիկների, պապիկների, ծնողների շնորհիւ է: Ամէն դէպքում լեզ-

ուի պահպանութիւնն այսօր համայնքի օրակարգային հարցերից է: Սոնիա Առաքելեանը նկատում է, որ իր սերնդակիցներից շատերը չեն խօսում հայերէն եւ նրանց մի մասն ամուսնացած է ազգութեամբ ոչ հայերի հետ:

Չնայած փոքրաթիւ լինելուն, ինչպէս նաև չկազմակերպուածութեանն, ամէն դէպքում տարբեր ժամանակներում, տարբեր ոլորտներում հայերն առաջատար մասնագետների թուով են: Մեքսիկայի նշանաւոր հայերից են գործարարներ Ս.Պալույեանը եւ Շ.Քրդիկեանը, ճարտարագէտ Ջ. Նշանեանը, Մեխիկոյի Ազգային համալսարանի դասախօսներ՝ Ֆիլիպոս Շ. Հաճեանը, արուեստաբան, պարուհի Ա. Օհանեանը, աստղագէտ դոկ-



տոր Պ. Փիշմիշը (Փիշմիշեան), երաժիշտ Պ. Հիւսեանը եւ այլք: Մեքսիկայի ճանաչուած հայերից է գիտնական Խոսէ Սարուխանը, ում որդին ԱՄՆ-ում Մեքսիկայի դեսպանն է եղել:

Ինչ վերաբերում է այն հայերին, ովքեր Մեքսիկա են եկել անկախութիւնից յետոյ, ապա նրանց թիւը մօտ 500 է: Ոմանք դասական երաժշտութեան մասնագէտներ են, ոմանք գիտնականներ են, պրոֆեսորներ, որոնք աշխատում են տարբեր համալսարաններում: Շատերն ունեն սեփական բիզնեսը տարբեր ոլորտում՝ կոչիկի, գորգերի արտադրութիւն եւ այլն:

«Հայ համայնքը ֆորմալ առումով կազմակերպուած չէ, այդուհանդերձ այս փոքրաթիւ եւ ցրուած համայնքը հպարտ է իր հայկական ծագմամբ: Իւրաքանչիւրն իր հնարաւորութեան սահմաններում նպաստում է այն գործին, որ Մեքսիկան իմանայ, թէ ովքեր են հայերը եւ ինչերի միջով են անցել: Հայերին համախմբելու հարցում մեծ դեր է կատարում Մեքսիկայում Հա-

### 2000 ՏԱՐՈՒԱՅ ԺԱՅՈՒՓՈՐ ԴԱՄԲԱՐԱՆԻ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ՈՒՐՅԱՅԻ ՄԵԶ



Թուրքիոյ տարածքին գտնուող Ուրֆայի մէջ, Թուրք հնագէտները յայտնաբերած են աւելի քան 2000 տարուայ պատմութիւն ունեցող ժայռափոր դամբարան, այս մասին կը տեղեկացնէ «arkeolojihaber.net» կայքը: Եղեսիոյ թագաւորութեան ժամանակաշրջանին պատկանած այս հսկայ դամբարանին մէջ յայտնաբերուած է ընդհանուր առմամբ 133 ժայռափոր գերեզման: Ան կը պատկանի Եղեսիոյ Աբգար թագաւորի ժամանակաշրջանին: Աւելի վաղ Ուրֆայի մէջ

յայտնաբերուած էր Եղեսիոյ Աբգար Ե թագաւորի ընտանեկան դամբարանը: Նշենք, որ Աբգար Ե թագաւորը յայտնի է նաև Աբգար Հինգերորդ Ուրքքամա անունով:

Ըստ աւանդութեան, Աբգար թագաւորը ընդունած է քրիստոնէութիւն, դառնալով Մ.թ. առաջին դարու առաջին քրիստոնէայ թագաւորը: Ան Հայ առաքելական եկեղեցոյ սուրբերէն է: Ըստ հայոց պատմահայր Մովսէս Խորենացիին Աբգար կը համարուի հայ թագաւոր մը:

յաստանի դեսպանատունը, որը հիմնուել է 3 տարի առաջ: Այն իրականացրել է տարբեր միջոցառումներ, որոնք նպաստում են հայկական մշակուցի տարածմանը: Դա շատ կարեւոր է: Դեսպանատունը խթանում է նաև ուսանողների փոխանակման ծրագրերը: Դիւանագիտական այս կառույցը կարեւոր է ոչ միայն Հայաստան-Մեքսիկա մշակութային, տնտեսական յարաբերութիւնները զարգացնելու համար, այլև այն կապող օղակ է տեղի հայ համայնքի համար», - ասաց նա:

Սոնիա Առաքելեանը ներկայում աշխատում է Մեխիկոյի Յիշողութեան եւ հանդուրժողականութեան թանգարանում, որը 7 տարի առաջ է բացուել: Այն շատ մեծ թանգարան է՝ աւելի քան 6000 քմ տարածքով: Այսօր այն ամենաշատ այցելուութիւն ունեցող թանգարաններից է: Թանգարանի հիմնման նախագիծը ստեղծուել է հրեական համայնքի երկու ներկայացուցիչների նախաձեռնութեամբ:

«11 տարի առաջ, երբ այն դեռ կառուցման փուլում էր, ես նրանցից մէկի՝ տնօրէն Շարոն Զագայի կողմից հրաւիրուեցի իրենց հետ համագործակցելու:

Այս թանգարանն ունի 7 բաժիններ, որոնք պատմում են տարբեր ժամանակներում տեղի ունեցած ցեղասպանութիւնների, այդ թուով հայերի ցեղասպանութեան մասին: Թանգարանի մեկ այլ հատուած նուվիրուած է հանդուրժողականութեանը եւ Մեքսիկայում Մարդու իրաւունքների խախտումներին: Հայերին նուիրուած սրահը փոքր է, սակայն միեւնոյն ժամանակ բաւական ազդեցիկ, 7 տարի անց ես հպարտ եմ՝ ասելով, որ աւելի քան 2 մլն 800 հազար այցելու ենք ունեցել, այցելուներից շատերը երբեւէ չէին լսել հայերի մասին, այսօր նրանք գիտեն», - յաւելեց նա:

2015 թուականին որոշուեց թանգարանում կազմակերպել ժամանակաւոր ցուցադրութիւն՝ Հայոց ցեղասպանութեան թեմայով: Սոնիա Առաքելեանի խօսքով՝ այն մեծ յաջողութիւն ունեցաւ, մեծ թուով այցելուներ եղան՝ պատգամաւորներ, դերասաններ, ակտիւիստներ, գործարարներ, լրագրողներ: Չորս ամիս տեւած ցուցահանդէսին 70 հազարից աւելի այցելու է գրանցուել: Ցուցահանդէսը ներկայացուել է նաև ԱՄՆ-ում:



### ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ, ՈՐՈՆՔ ՆՈՐ ՀԱՅԵԱՅՔ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ ԿԵԱՆՔԻՆ

-Կեանքի հետաքրքրությունը կը կայանայ այն բանի մէջ, որ մենք հակուած ենք փոփոխուելու, շատ բան չենք գիտեր, պէտք է ամէն պահէ օգտուինք ու լաւագոյնը քաղենք կեանքէն՝ առանց նախապէս գիտնալու, թէ ինչ պիտի պատահի յաջորդ պահուն: Գայթակղիչ անորոշութիւն...: (Ճիւտա Ռատնըր)

-Այսօր կեանքի ամենատիւր կողմը այն է, որ գիտութիւնը աւելի արագ կը զարգանայ ու կը կատարելագործուի, քան հասարակութիւնը՝ կ'իմաստնանայ: (Ալզէք Ազիմով)

- Մարդիկ միանշանակ չար կամ բարի չեն ըլլար: Անոնք կարծես աղցան ըլլան լաւ ու վատ տարբեր բարդոր մասերով, որոնք միախառնուած են իրարու խառնաշփոթութեան ու հակասութիւններու մէջ: (Լեմընի Միքել)

- Շատ մարդիկ կը ծախսեն իրենց վաստակած գումարները այնպիսի իրեր գնելու համար, որոնց անոնք իրականութեան մէջ պէտք չունին եւ միայն ուրիշներու վրայ սպաւորութիւն ձգելու համար կ'ընեն այդ գնումները: (Ուիլ Ռոճըր)

- Կեանքի մէջ սխալներ գործելը ոչ միայն աւելի պատուաբեր է, այլեւ աւելի օգտակար, քան կեանքը, որ կ'ապրիս ոչինչ ընելով: (Ճորճ Պեռնարտ Շօ)

- Ամէն ինչ, որ կ'ընես միայն քեզի համար, կը կորսուի այն ժամանակ, երբ դուն այլեւս չես ըլլար, իսկ այն ամէնը, որ կ'ընես

միւսներուն համար, յաւերժ կը մնայ իբրեւ ժառանգութիւն: (Գալու Նաուզէ Գալու)

- Եթէ դուն այժմ ձանձրալի ու տաղտկալի կեանք կը վարես, ատիկա այն պատճառով, որ կեանքիդ ընթացքին շարժած ես այնպէս, ինչպէս քեզի ըսած են մայրդ, հայրդ, ուսուցիչը, վանականը կամ ուրիշ մէկը, ուստի դուն արժանի ես այդպիսի կեանքի: (Ֆրանք Ջաբա)

- Երբ մենք բան մը ամենաքիչը կը սպասենք, կեանքը մեր առջեւ փորձութիւն կը դնէ՝ փոխուելու մեր քաջութիւնն ու ցանկութիւնը փորձելու համար: Իմաստ չկայ ձեռացնելու, թէ ոչինչ պատահած է կամ ըսել, թէ պատրաստ չենք: Փորձութիւնը չ'սպասուի: Կեանքը ետ չի նայիր: Մէկ շաբաթը աւելի քան բաւական է, որպէսզի մենք որոշենք՝ կ'ընդունինք մեր ճակատագիրը, թէ՛ ոչ: (Փաուլօ Քոնլի)

- Կեանքը բնական ու ինքնաբերական փոփոխութիւններու ընթացք է: Մի հակառակիք անոր, ատիկա միայն վիշտ կը պատճառէ: Թոյլ տուէք իրականութեան իրականութիւն ըլլալու: Թոյլ տուէք, որ կեանքը բնականօրէն առաջ շարժի այն ուղղութեամբ, որով կ'ընթանայ: (Լաօ Յգի)

Այն կիրք, որի մատները պիտի բռնէի դողով, որի աչքերում գլխապտոյտս պիտի օրօրուէր, ինչ որ տեղ հիմա երեւի մենակ ու շատ է մենակ. եւ չկայ մէկը, որ աստուածացնի նրա մատներին քնքշութիւնը թոյլ: (Վահագն Դաւթեան)

### ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԻՋՈՒԴԻՆԵՐՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՍԱՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- Իրարու խառնել հաւասար չափով՝ առանց կուտրու աղացած կիտրոն (կեղեւի հետ միասին), մեղր եւ ձիթապտուղի իւղ: Պահել սառնարանի մէջ եւ խմել երիկամունքներուն մէջ աւագահատիկներ ըլլալու պարագային՝ մէկական ճաշի դգալ՝ օրը 3 անգամ՝ ուտելէն 30 վայրկեան առաջ:

Երիկամունքներուն մէջ քարի գոյութեան ժամանակ՝ 10 թէյի դգալ թրթնջուկի սերմերուն վրայ լեցնել 1 լիթր «կազոր» տեսակի գինի, թրմել 3 օր: Խմել ուտելէն 30 վայրկեան առաջ՝ օրը 3 անգամ, մէկական թէյի դգալ: Պարունակութիւնը օգտագործելէ առաջ ցնցել:

Մէկ ճաշի դգալ ինձորի մանրուած կեղեւի վրայ լեցնել 1 գաւաթ եռացած ջուր, թրմել 30-40 վայրկեան: Խմել երիկամունքներու բորբոքման ժամանակ՝ օրը 3 անգամ, գաւաթի 1/3 մասը, ուտելէն 30 վայրկեան առաջ: 50 կր. ընկոյզի միջուկը մանրելով փոշիացնել, վրան լեցնել 1 գաւաթ կաթ, եփել, ձգել, որ սառի: Խմել օրուան ընթացքին: Օգտակար է երիկամունքներու հիւանդութեան ժամանակ:

Դժուարամիզութեան պարագային՝ օրը 3 անգամ, ուտելէն 30 վայրկեան առաջ ընդունիլ ջրոսպի փոշի՝ վրայէն ջուր խմելով:

Երիկամային եւ լեղապարկի քարերու պարագային շատ լաւ է օգտագործել ճակնդեղի, վարունգի, ստեպլինի հիւթերու խառնուրդը (1:1,5:2 յարաբերութեամբ):

Ամէն անգամ միզապարկի թուլութեան պարագային պատրաստել այս չափաբաժինը՝ 100 կրամ ուրցի սերմին վրայ լեցնել 1 լիթր չոր սպիտակ գինի, թրմել 1 ամիս՝ մութ, գով տեղ, պարբերաբար ցնցել հեղուկը: Խմել երիկամային, միզաքայրային հիւանդութիւններու ժամանակ, սրտխառնոցի պարագային՝ իբրեւ միզամուղ՝ 50 կր., օրը 3 անգամ՝ ուտելէն 30 վայրկեան առաջ: Անոնք, որոնք որոշած են ազատիլ միզապարկի քարերէն, պէտք է ամէն օր խմեն սոխի թուրմ: Ապակեայ շիշը կէս չափով լեցնել մանրուած սոխով, մինչեւ վզիկը աւելցնել ալքոլ կամ օղի եւ 12 օր դնել տաք տեղ կամ արեւի տակ: Ապա քամել եւ խմել մէկ ճաշի դգալ, օրը 2 անգամ՝ ուտելէն 30 վայրկեան առաջ:

Իսկ կենտրոն Մալախովը կ'առաջարկէ երիկամունքները մաքրել ձմերուկի եւ սեւ հացի օգնութեամբ: Եթէ անօթի էք, ձմերուկ կերէք, եթէ ծարաւ էք, ձմերուկ կերէք, եթէ շատ անօթի էք՝ ձմերուկ եւ սեւ հաց կերէք: Այս մաքրման ընթացքը կը տեւէ 2-3 շաբաթ:

### ՆԻՀԱՐՆԱԼՈՒ 10 ԿԱՆՈՆ՝ ԱՌԱՆՑ ՅԱՏՈՒԿ ՍՆՆԴԱԿԱՆՈՆԻ

Նիհարնալու ընդամէնը 10 կանոն, որոնք կ'օգնեն ձեզի մէկ ամսուան մէջ նիհարնալ 3 քիլոկրամ՝ առանց յատուկ սննդակարգ պահելու:

1. Նախաճաշին կէս ժամ առաջ խմեցէք մէկ գաւաթ տաք ջուր:
2. Սեւ թէյը փոխարինեցէք կանաչով:
3. Շաբաթը նուազագոյնը երկու անգամ մէկական ժամ զբաղեցէք մարմնամարզութեամբ:
4. Ճերմակ հացը փոխարինեցէք ամբողջական հացահատիկներու

- հացեղէնով:
5. Ընդհանրապէս բացառեցէք արագ ուտելիքը:
  6. Մի օգտագործէք ալքոլային խմիչքներ աւելի յաճախ, քան երկու շաբաթը մէկ:
  7. Կերէք քնանալէն առնուազն 4 ժամ առաջ:
  8. Յարկերը բարձրացէք ոտքով, եւ ոչ թէ վերելակով:
  9. Օրական նուազագոյնը խմեցէք 2 լիթր ջուր:
  10. Երբեք հեռատեսիլի կամ համակարգիչի առջեւ մի ուտէք:

### ԻՆՉ ՊԵՏՔ Է ՈՒՏԵԼ ՅԱՃԱՆ ԺՊՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Այսօր ոչ մէկը ապահովագրուած է ճնշումի դէմ, քանի որ մեր առօրեան գերծանրաբեռնուած ու լարուած է: Ջղային համակարգը կարգաւորելու համար մեր մարմինը պէտք ունի Պ կենսասիւթին, որուն օգտագործումը կ'օգնէ աւելի դիւրութեամբ յաղթահարելու ճնշում պատճառով իրավիճակները:

Վիթամին Պ1-ով հարուստ են հացը, հնդկաձաւարը, վարսակը, կորեկը, լուբիան, ոլոնը, խոզի եւ հորթի միսը: Վիթամին Պ2-ով եւ

Պ6-ով հարուստ են կաթնամթերքը, միսը, լուբիան, հակիթը, թարմ պտուղը:

Մարմինը մակնեգիլումով կը հարստացնեն ձուկը, ծովամթերքը, ծիրանը, չիրերը, բանջարեղէնը եւ պանանը:

Բացի վիթամին Պ-էն, պէտք է նաեւ օգտագործել վիթամին Սի եւ պեթաքարօթին պարունակող ուտելիք՝ բանջարեղէն, կիտրոն, թուրինջ, նարինջ, հատապտուղներ (սեւ հաղարջ, ազնուամորի), կանաչեղէն:

### ԻՆՉՊԵՍ ՈՐՈՇԵԼ ԲՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԳԻԾԵՐԸ ԱՐՏԱՔԻՆԻ ՄԻՋՈՑՈՎ

Յայտնի փաստ է, որ մարդու մասին շատ բան կ'ըսեն անոր ժեստերը-շարժումները: Բայց անգամ չիմանալով ժեստերու լեզուն, կարելի է բնութագրել մարդիկ՝ անոնց արտաքին տեսքին միջոցով: Պարանոց- կարծ պարանոցը կը խօսի մարդու կամակորութեան եւ անհետաւորութեան մասին, իսկ երկար պարանոց սովորաբար կ'ուրեւնան մեղամարտ բնաւորութեան մարդիկ: Հաստ պարանոցը կը խօսի մարդու անվախ ըլլալու մասին:

Իսկ բարակ պարանոց ունեցողները կարելի է համարել ուռմանթիկ եւ ամչկոտ:

Ուսեր- խօսելու ընթացքին ուշադրութիւն դարձուցէք մարդու ուսերուն վրայ: Եթէ մարդու ուսերը նեղ են, ուրեմն այդ անձը ամչկոտ է: Լայն ուսերը կը խօսին այն մասին, որ անձը չափազանց քաջ է: Անոնք յաճախ վստահութիւն կը ներշնչեն շրջապատին:

Ազդերը- խոշոր եւ լայն ազդերը սովորաբար կը խօսին չզիջող անձի մասին: Կլոր ազդերը ունեցողները մեծ մասամբ փափուկ են եւ կամք չունեցող: Իսկ նեղ ազդերը կը խօսին ուժեղ բնաւորութեան եւ դիմացկունութեան մասին: Ի դէպ, երկար, գեղեցիկ ոտքերը կը խօսին այն մասին, որ մարդը ունի իր նպատակներուն հասնելու ունակութիւն:

ձակատ- խելացի մարդիկ կ'ուրեւնան երկար եւ քիչ մը փոքր առաջ եկած ձակատ: Իսկ նեղ ձակատ ունեցողները կ'առանձնան բռնկունութեամբ: Եթէ մարդու ձակատը քառակուսի է, ուրեմն

գործ ունիք ազնիւ մարդու հետ: Յօնքեր- բարակ յօնքերը կը խօսին գոռոզ բնաւորութեան մասին: Խառն աճած յօնքերը՝ դաժանութեան եւ կոպտութեան մասին, իսկ հաստ յօնքերը՝ պարզութեան եւ անկեղծութեան մասին:

Աչքերը- խորունկ աչքերը կը բնութագրեն ժլատ եւ կախալ մարդիկ: Լայն բացուած աչքերը կը վկայեն պերճախօսութեան մասին, ինչպէս նաեւ՝ հետաքրքրասիրութեան: Նեղ աչքերը կը խօսին դաժան անձի մասին:

Քիթ- սուր եւ երկար քիթը կը խօսի խստութեան եւ բռնկոտող ականութեան մասին: Անլուրջ եւ քմահաճ մարդոց յատուկ է քիչ մը վեր ցցուած քիթը:

Մեծ, հաստ քիթը կը խօսի մարդու դաժանութեան մասին:

Բերան- փոքր բերան սովորաբար կ'ունենան թոյլ բնաւորութիւն ունեցող մարդիկ: Եթէ անձի վերին շրթունքը քիչ մը մեծ է ներքեւինէն, ուրեմն ան իսկական անձնասէր է: Եթէ ներքեւի շրթունքը աւելի մեծ է, ուրեմն ան սովոր է կեանքին ստանալ ցանկալին: Նեղ շուրթերը կը խօսին փակուածութեան մասին: Մեծ շուրթերը կը խօսին մարդու քաջութեան մասին:

Ծնօտ- ուժեղ մարդիկ, որոնք ինքնուրոյն կը հասնին իրենց նպատակներուն, յաճախ կ'ունենան մեծ եւ լաւ արտայայտուած ծնօտ: Համեստ եւ անվստահ մարդոց առաւել բնորոշ է փոքր եւ չարտայայտուած ծնօտը:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

### ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Շարունակուած էջ 15-էն

Հոգեհանգստեան Արարողութիւն պիտի կատարուի Մեքսիքոյի մէջ վերջերս տեղի ունեցած մեծ երկրաշարժի զոհերու հոգիներուն համար: Այս արարողութեան պիտի

նախագահէ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Այս պաշտօնական արարողութեան հետք՝ հիւրասիրութիւն մը տեղի պիտի ունենայ Մեքսիքոյի Մայրաքաղաքին Memory and Tolerance թանգարանին մէջ:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթերօին**  
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

### «Ռեալը» Կատալոնիայում Պարտուեց Պրիմերայի Նորեկին



Ֆուտպոլի Սպանիայի առաջնութեան 10-րդ տուրում Մադրիդի «Ռեալը» հիւրընկալուելիս 1:2 հաշուով սենսացիոն պարտութիւն կրեց կատալոնական «Ժիրոնայից», որը տարաւ կամային յաղթանակ:

Խաղի հաշիւը 12-րդ րոպէին բացեց «Ռեալը» սպանացի կիսապաշտպան Իսկոն, որը խփեց առաջին խաղակէսի միակ կոլը: Երկրորդ խաղակէսի սկզբնամասում կատալոնացիները 4 րոպէում աչքի ընկան 2 անգամ եւ առաջ անցան հաշուի մէջ: Ընդմիջումից յետոյ Պրիմերայի նորեկն ունէր շատ վստահ տեսք եւ պաշտպանում էր գրեթէ անխալ: «Ռեալը» ունէր տարածքային մեծ առաւելութիւն, բայց իրական կոլային պահեր ստեղծել չէր յաջողուում:

Արքայական ակումբն ընթացիկ առաջնութիւնում առաջին անգամ միաւորներ կորցրեց արտագնայ խաղում եւ 20 միաւորով մնաց երրորդ տեղում: Առաջատար «Բարսելոնան» ունի 28 միաւոր, իսկ երկրորդ տեղում գտնուող «Վալենսիան»՝ 24: «Ժիրոնան» 12 միաւորով 11-րդ տեղում է:

Յիշեցնենք, որ «Ռեալը» յաղթել էր Պրիմերայի նախորդ 13 խաղերում անընդմէջ՝ սահմանելով ռեկորդ:

### «Բարսելոնան» Յաղթեց Բիլբաիոյում

Սպանիայի առաջնութեան 10-րդ տուրում «Բարսելոնան» Բիլբաոյում խաղաց «Աթլետիկոյի» դէմ: Կատալոնական ակումբի գլխաւոր մարզիչ Էռնեստո Վալվերդէի նախկին թիմի հետ պաշարում յաղթանակ բերեցին Լիոնել Մեսիի եւ Պաուլինյոյի կոլերը՝ 2:0: Արժենթինացի յարձակողը 12-րդ կոլը խփեց Սպանիայի ընթացիկ առաջնութիւնում:

«Բարսելոնան» 28 միաւորով առաջին տեղում է եւ երկրորդ տեղում ընթացող «Վալենսիայի» նկատմամբ ունի 4 միաւորի առաւելութիւն:

### «Մանչեսթեր Սիթի» 8-րդ Անընդմէջ Յաղթանակը

Անգլիայի առաջնութեան 10-րդ տուրում առաջատար «Մանչեսթեր Սիթին» մրցակցի խաղադաշտում հանդիպեց «Վեստ Բրոմվիչի» հետ եւ առաւելութեան հասավ 3:2 հաշուով: Կատալոնացի Խոսեպ Գուարդիոլայի գլխաւորած թիմը Պրեմիեր լիգայում տարաւ 8-րդ անընդմէջ յաղթանակը եւ 28 միաւորով առաջին տեղում է: «Սիթին» տարել է 9 յաղթանակ, 1 հանդիպում էլ աւարտել է ոչ ոքի: Երկրորդ տեղում ընթացող «Մանչեսթեր Եունայթեդն» ունի 23 միաւոր: Երրորդ տեղում է «Տոտենհեմը»՝ 20 միաւոր:

- Անգլիայի առաջնութիւն, 10-րդ տուր
- «Վեստ Բրոմվիչ» - «Մանչեսթեր Սիթի»՝ 2:3
- «Արսենալ» - «Սուոնսի»՝ 2:1
- «Լիւերպոլ» - «Հադերսֆիլդ»՝ 3:0
- «Բրիսթոլ Փելաս» - «Վեստ Հեմ»՝ 1:2
- «Ուոթֆորդ» - «Սթոք Սիթի»՝ 0:1

### Անգլիայի Մ-17 Հաւաքականն Առաջին Անգամ Դարձել է Աշխարհի Ախոյեան

Ֆուտպոլի Անգլիայի մինչեւ 17 տարեկանների հաւաքականը դարձել է աշխարհի ախոյեան:



Հնդկաստանում կայացած առաջնութեան եզրափակիչում անգլիացիները 5:2 հաշուով յաղթել են Սպանիայի թիմին:

Անգլիայի Մ-17 հաւաքականն առաջին անգամ խաղաց աշխարհի առաջնութեան եզրափակիչում:

Երրորդ տեղի համար խաղում պրագիլացիները 2:0 հաշուով յաղթել են Մալիի հաւաքականին:

### Աշխարհի Առաջնութեան Սրցանակային Ֆոնդը 400 մլն Տոլար է Կազմելու

Յայտնի է դարձել, որ 2018 թուականի մարտին Ռուսաստանում կայանալիք աշխարհի առաջնութեան մրցանակային ֆոնդը կազմելու է 400 մլն տոլար:

ՖԻՖԱ-ն Հնդկաստանի կոլկաթա քաղաքում տեղի ունեցած հանդիպման ժամանակ ընդունել է գումարի աւելացմանն ուղղուած դիմումը:

2014 թուականի աշխարհի առաջնութեան ֆոնդը 42 մլն տոլարով քիչ է եղել՝ 358 մլն դոլար:

Յիշեցնենք, որ հաւաքականների մակարդակով գլխաւոր մրցաշարն անցկացվելու է Յունիսի 15-ից Յուլիսի 14-ը:



### Ինֆանտինոն Յայտարարել է Կոնֆեդերացիաների Գաւաթի Փոխարէն Նոր Մրցաշար Անցկացնելու Մասին

ՖԻՖԱ-ի նախագահ Զանի Ինֆանտինոն հաստատել է, որ Կոնֆեդերացիաների Գաւաթի փոխարէն կարող է նոր մրցաշար անցկացուել: Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով Reuters-ը, Ինֆանտինոն նշել է, որ արդէն որոշում կայ նոր մրցաշարի մասին մտածել, որը կը փոխարինի Կոնֆեդերացիաների գաւաթի խաղարկութեանը:



«Ներկայիս Աշխարհի ակումբային առաջնութիւնը լաւ մրցաշար է, սակայն այն մինչ օրս զարգացման հարցում ոչ մի ազդեցութիւն չի ունեցել: Պէտք է տեսնենք՝ արդեօք կարող ենք նոր բան մտածել, ինչը թոյլ կը տայ ակումբային ֆուտպոլին «կոնֆեդերացիաներին զարգանալ: Երբ ՖԻՖԱ-ն մրցաշար է անցկացնում, ապա դա պէտք է իւրաքանչիւր թիւն ունենայ: Այդ իսկ պատճառով մենք կամ նմանատիպ մրցաշար ենք կազմակերպում, կամ էլ ոչինչ չենք անում», ասել է ՖԻՖԱ-ի նախագահը:

### «Մանչեսթեր Եունայթեդի» Երկրպագուները Գոհ Չեն Զենրիխ Միխարփանի Խաղից

«Մանչեսթեր Եունայթեդի» երկրպագուները չեն ընդունում Միխարփանի գործողութիւններից դժգոհ են մնացել Լոնտոնի «Տոտենհեմի» դէմ Անգլիայի առաջնութեան 10-րդ տուրի խաղում, որում ժողով Մոուրինիոյի գլխաւորած թիմը յաղթել էր նուազագոյն հաշուով:



Express.co.uk-

ն առանձնացրել է անգլիական ակումբի երկրպագուների՝ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպանի վերաբերեալ գրառումները սոցիալական ցանցերում: Երկրպագուները նշում են, որ Միխարփանը չի արդարացնում 10 համարի դերքի խաղացողի սպասելիքները: Շատերի կարծիքով, մեկնարկային կազմում հայ ֆուտպոլիստին պէտք է փոխարինի անգլիացի կիսապաշտպան Ջեսի Լինգարդը:

Յիշեցնենք, որ «Տոտենհեմի» դէմ խաղում Միխարփանը «Մանչեսթեր Եունայթեդի» մեկնարկային կազմում խաղաց 65-րդ րոպէ եւ դաշտում տեղը զիջեց Ջեսի Լինգարդին: «Մանչեսթեր Եունայթեդի» գլխաւոր մարզիչ ժողով Մոուրինիոն այս մրցաշրջանում յաճախ է կատարում այդ փոխարինումը:

**ՅԱՒԱԿՅԱԿԱՆ**

Ընկ. ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՒՂԱԼԵԱՆԻ (Լիբանան) մահուան առթիւ «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաններուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Փոլ Մուղալեանին եւ Տէր եւ Տիկ. Ռուբէն Մուղալեաններուն:

### Տարօրինակ Պատերազմ Հայաստանում

Շարունակուած էջ 2-էն

ցանկանում շօշափելի պատասխանատուութիւն ստանձնել տնտեսական հեռանկարի համար, եթէ չունի վստահութիւն իշխանութեան հեռանկարի հարցում:

Այդպիսով, Հայաստանը ներկայումս մի վիճակում է, երբ Սերժ Սարգսեանը պատրաստուած է պատասխանատուութիւնը թողնել Կարէն Կարապետեանի վրայ՝ տնտեսական բեկման բացակայութիւնը դիտարկելով որպէս նրա անարդիւնաւետութեան հետեւանք, իսկ Կարէն Կարապետեանն էլ, հակառակը, փորձում է ցոյց տալ, որ Սերժ Սարգսեանի քաղաքական աջակցութիւնն է անբաւարար, դրա համար էլ աւելի շուտ համակարգն է առաջ տանում իր շահերը, քան Կարապետեանը իր քաղաքականութիւնը: Ճշմարտութիւնն, իհարկէ, այս դէպքում մէջտեղում է, կամ բոլորովին Սարգսեան-Կարապետեան տիրոջութում է: Գործնական-

նում նոյնն էր պատճառը նաեւ Սարգսեան-Աբրահամեան հարթութիւնում՝ լուծուած էր իշխանութեան հարցը, հետեւաբար էր կարող գոյութիւն ունենալ տնտեսական քաղաքականութիւն:

Կայ տնտեսական պատերազմ իշխող համակարգի ներսում, որն, իհարկէ, ընթանում է ոչ բացայայտ, ոչ բառի ամենաուղիղ իմաստով, սակայն հենց դրա տրամաբանութեամբ: Պատերազմ տնտեսական ռեսուրսների համար, քանի որ դրանք են նաեւ կանխորոշելու իշխանութեան հարցը: Պարզապէս այդ պատերազմի առանձնայատկութիւնն այն է, որ առաւել մեծ կորուստ ունենում են ոչ թէ մասնակիցները, այլ հասարակութիւնը եւ պետութիւնը: Մասնակիցները, թերեւ, կորուստ չեն էլ ունենում, նրանք պարզապէս կ'ամ աւելացնում են ունեցածը, կ'ամ ամենաւատ դէպքում՝ պահպանում եղածը: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏ ՈՒԱԿԱՆ»

### ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄՍՈՒԱՆ ՆՈՒՐՈՒԱԾ

Շարունակուած էջ 13-էն

դասարանի աշակերտները գեղեցիկ կատարողութեամբ երգեցին «Մեր Հայրենիք Սիրելի» երգը որ բծախնդրորէն պատրաստուած էր օր. Բեկի ձինպաշեանի կողմէ: Հոգեկան գոհացում ու հպարտանք պարգեւեցին Տիկ. Ձորինէ Գեղորգեանի պատրաստած 4-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարանի ներկայացուցած «Հայ Նազան իմ Եարը», «Ձարթօնք», «Ես Աղջիկ եմ Նազ Ունեմ» եւ «Մէկ Ու Կէս Միլիոն Հայ» երգերն ու պարերը որոնք ներդաշնակ ու համաչափ շարժումներով դրդաբուցեցին բեմը:

Ուշագրաւ էին Տիկ. Լիզա Մանոյանի պատրաստութեամբ 2-րդ եւ 3-րդ դասարաններու «Վարդի Ծառ» եւ «Հոպա Ձարկէ Ու Ձարկէ Ու քելլէ» ներկայացուցած կատակ երգերը, նաեւ 6-րդ եւ 8-րդ դասարաններու հիանալի կատարողութեամբ ու գունագեղ տարազներով ներկայացուցած «Հայաստան» պարը:

Ակնառու էր եռագոյնի ծածանումը բեմին վրայ ամբողջ հանդիսութեան ընթացքին: Յատկապէս տղոց ռազմական պարի ժամանակ երբ ձեռք ձեռք բռնած միւս ձեռքին հայկական դրօշը վերամբարձ կը զարդարէր բեմը՝ արժանանալով ներկայներու գնահատականին եւ ծափող-ջոյններուն:

Դպրոցի տնօրէն Պրն. Շահէ Մանկրեան եզրափակիչ իր խօսքին մէջ ըսաւ. «Մեր դպրոցին մէջ ամէն օր մշակոյթի տօն է: Մենք հպարտ ենք մեր պատմութեամբ, հակառակ որ մեր պատմութիւնը եղած է տխուր, սակայն մենք եղած ենք ուրախ, հիւրասէր եւ խիզախ: Կրցած ենք պաշտպանել մեր լեզուն, սովորութիւններն ու մշակոյթը, ապահովելով մեր ազգի հուշիւնն ու շարունակականութիւնը, արհեստի մէջ օտար արհեստի վրայ: Մենք կանք ու պիտի մնանք:

Պրն. Տնօրէնը շնորհակալութիւն յայտնեց հայերէնի ուսուցչուհիներուն, պարուսույց օր. Փաթիլ Ալպարեանի եւ դաշնակահար օր.

Էլմիրա Սիմոնեանին եւ բոլոր անոնց որոնք սատար հանդիսացան սոյն ձեռնարկի յաջողութեան:

Հանդիսութիւնը վերջ գտաւ «Հայաստան Աշխարհ» երգով:

Յովսէփեան դպրոցի հայ մշակոյթի նուիրուած Հոկտեմբեր ամսուան տօնակատարութիւնները մանկամտերի մանուկներու մասնակցութեամբ ունեցաւ անուշաբոյր վերջաբան:

Մեր կեանքի զարդն համարուող, մեր սրտահատորները, Ուրբաթ, կեսօրէ ետք ժամը 2-ին հանդէս եկան Գալուստեան-Տունանեան սրահին մէջ: Կապոյտ, կարմիր, դեղին եւ կանաչ դասարանները յաջորդաբար բեմ բարձրացան ծիրանագոյն տարազներով, արտասանութիւններով երգերով եւ պարերով: Հիանալի էր կապոյտ դասարանի աշակերտներուն աշնան եղանակը գովաբանող խմբային երգերն ու արտասանութիւնները: Կարմիր դասարանի աշակերտներու շրթներուն վրայ գեղեցկօրէն հնչեց մեր այբուբենը: Դեղին դասարանի աշակերտները իրենց մանկական յատուկ անմեղութեամբ ու շարժուածներով փայլք տուին հանդիսութեան: Ետքը կանաչ դասարանի աշակերտներ խմբային երգեցողութեամբ եւ քաղցրահնչուն ձայնով ներկայացուցին Լորիկ եւ Կաքաւիկ երգերը, ուրախութեամբ եւ հրճուածքով լեցնելով ծնողներուն սրտերը յատկապէս երբ անոնք հպարտօրէն ուխտեցին մնալ հաւատարիմ իրենց դպրոցին ու Մեսրոպ Մաշտոցին ըսելով՝

Մենք ծիրն ենք կանաչ մեր նոր դպրոցին.

Մենք թոռներն ենք ժիր, Մեսրոպ Մաշտոցին:

Օրուայ բեմավար Օր. Աշխէն բեմ հրաւիրեց դպրոցի տնօրէն Պրն. Շահէն որ շնորհակալութիւն յայտնեց մանկամտերի բաժնի բոլոր ուսուցչուհիներուն նշելով թէ օրուայ յաջող հանդիսութիւնը ցոլացումն էր իրենց բծախնդրութեան եւ տքնաջան աշխատանքին: Ապա բարի երթ մաղթելով ծնողներուն փակեց օրուայ հանդիսութիւնը:

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՒ ՀԻՐԸՆԿԱԼՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 14-էն

ներկայ տասնամեակին հայ երգիչներ ելոյթներ կ'ունենան թրքական կայանին մէջ, արդեօք իրենք կը գիտակցի՞ն որ այդ երգչուհին հայուհի է եւ եթէ թրքական մամուլը կ'անդրադառնայ որ հայուհի մը իր ներդրումը կը բերէ երկրին զարգացման գործին մէջ: Սիւլիլ պատասխանեց թէ հարցազրոյցները եւ մասնակցութիւնը արդէն փաստեր են ըսելով որ կարեւոր է թէ որ լեզուով կ'երգէք, արդէն իրենց մարմինը կը փշաքաղուի ազդուելով երգուած երգերէն: Քանակը կարեւոր է, բայց Սիւլիլ կը կարծէ թէ յաջողած է:

Սիւլիլ նշեց, որ շատ մեծ յուզումնք եւ բերկրանք պարեցաւ, երբ «Նամակ»ը առաջին անգամ դիտած է թրքական հեռուստաեթերէն: Երգչուհին կը հաւատայ, որ երաժշտութիւնը համամարդկային արժէք է, եւ ինքն իր երգերով կը փորձէ մարդասիրութիւն, հայրենասիրութիւն եւ համերաշխութիւն սերմանել:

Իսկ գալով Անտրէին, ան արտայայտուեցաւ թէ այս աշխատանքը վերջինը չ'ըլլայ տրուած ըլլալով որ մենք ունինք ուժեղ համայնքներ որ կը պահպանեն հայ դպրոցն ու եկեղեցին եւ ամենակարեւորը հայ մշակոյթն է, հայ երգն ու պարը: Ան շնորհակալութիւն յայտնեց սոյն հրաւերին համար: Հարց տրուեցաւ Անտրէի թէ ինչպէ՞ս սկսած է իր երգարուեստի ճանապարհորդութիւնը: Ան յայտնեց թէ իր երաժշտական ասպարէզը սկսած է վաղ տարիքին: Անտրէն ծնած է Ստեփանակերտ, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզին մէջ: Վաղ տարիքին անոր ընտանիքը նկատած է, որ ան մեծ հետաքրք-

րութիւն ցուցաբերած է երաժշտութեան հանդէպ: Արցախեան պատերազմի ընթացքին Անտրէն ելոյթ ունեցած է «Արցախի բալիկներ» մանկապատանեկան համոյթին: Երբ ան 15 տարեկան էր, մասնակցած է «Ճանապարհ դէպի Վերածնունդ» երաժշտական մրցոյթին: Տարիներ անց Անտրէն սկսած է հանդէս գալ որպէս անհատ երգիչ՝ «Ղարաբաղ» կոչուող փափ-ճազային խումբի մէջ: Ան շրջագայած է Հայաստանի տարբեր շրջաններ «Արցախ» իր խումբին հետ միասին: Երգելու հետ մէկտեղ Անտրէն նա «խաղացած է Ստեփանակերտի Տրամաթիկական Թատրոնի շարք մը ներկայացումներուն մէջ:

Չնայած անոր, որ Անտրէի ծնողները կ'ուզէին, որ իրենց տղան բժիշկ դառնայ, Անտրէն կ'երազէր երգիչ դառնալ: 1998 թուին անոր երազանքն իրականացաւ: Ան դարձաւ Երգի Պետական Թատրոնի անդամ, «այստեղ էր մինչ «2002 թ: Համագային Մշակութային Միութեան ԱՄՆի Արեւմտեան շրջանի ներկայացուցիչ» Տիկին Վիլմա Գուլուսեան իր խօսքին մէջ ուրախութիւնը յայտնեց Պոլսահայ Միութեան հետ գործակցաբար սոյն ձեռնարկը մէջտեղ բերելուն, որուն ընթացքին միասնաբար աշխատակցելով կրցան իրար մօտէն ծանօթանալ, նորութիւններ սորվեցան եւ իրար հետ հարգողակցեցան, ինչ որ մեծ արժէք կը ներկայացնէ երկու միութիւններուն համար: Թէեւ տարբեր գործելաձեւեր ունեցող միութիւններ են, սակայն նպատակը միեւնոյնն է, որ է՝ ՄՇԱԿՈՅԹԸ:

Հարցազրոյց՝ հանդիպումէն ետք տեղի ունեցաւ կոկիկ հիւրասիրութիւն եւ նկարահանում:

### ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Շարունակուած էջ 14-էն

սերունդ օգտուած եւ օրհնուած են Աւետարանչականի ընձերած բարերարութիւններէն: Ներկայիս ան կը շարունակէ մնալ Սփիւռքահայ ամենէն աշխուժ ու կենսունակ կազմակերպութիւններէն մին:

Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդը որոշած է տօնել Աւետարանչականի Հարիւրամեայ Յոբելեանը հետեւեալ առաջադրութեամբ.-

1. ԶԱստուած փառաբանել Աւետարանչականի հարիւր տարուայ վկայութեան եւ ծառայութեան համար.

2. Յանձնարարել աշխարհատարած բոլոր հայ Աւետարանական եկեղեցիներուն, որ խորհրդակցաբար Աւետարանչականի Հարիւրամեայ Կեդրոնական Յանձնախումբին, տօնեն այս պատմական մղոնաքարը հետեւեալ ձևով.-  
ա. Կազմակերպել հարիւրամեայ

տարեդարձի տօնակատարութիւններ համահայկական մարկարդակի վրայ կրօնական եւ մշակութային յայտագիրներով:

բ. Ոգեկոչել հարիւրամեակը Կիրակի, Յունիս 10, 2018ի առաւօտեան պաշտամունքի ընթացքին:

գ. Մասնակցել Աւետարանչականի Հարիւրամեայ Յոբելեանի հանգանակութեան արշաւին:

Յ. Աղօթել առ Աստուած որ Աւետարանչականը շարունակէ մատուցանել իր հոգեւոր, կրթական, ընկերային, մշակութային եւ մարդասիրական ծառայութիւնները հայ ազգին աւելի մեծ թափով ու տարողութեամբ:

Վեր. Դոկտ. Վահան Յ. Թութիկեան

Գործադիր Տնօրէն, Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի

### ՈՉ ԵՒՍ Է ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՍԱՐՕ ԿԱԼԵՆՑ

Շարունակուած էջ 13-էն

ծարանի նախամուտքի համար Տամպով քաղաքին մէջ (Ռուսաստան), եւ Մոսկուայի մէջ՝ «Խորհրդային Հայաստան՝ 60 տարի» Հայաստանի ցուցահանդէսային տաղաւարի ձեւաւորում:

-1990-ականներու ընթացքին Սարօ Կալենցը իրականացուցած է շարք մը ուղեւորութիւններ դէպի Եւրոպա եւ Ասիա, բացած է անհա-

տական ցուցահանդէսներ Փարիզի (1998) եւ Նիկոսիայի մէջ (1996):

2009 թուականին Սարօ Կալենցը հիմնադրած է «Կալենց» մշակութային հիմնադրամը: 2010 թուականի Ապրիլին՝ Յարութիւն Կալենցի 100-ամեակին եւ Արմինէ Կալենցի 90-ամեակին, Կալենց մշակութային հիմնադրամի եւ ՀՀ մշակոյթի նախարարութեան աջակցութեամբ բացուած է Կալենց թանգարանը:

ARMENIA FUND'S **20th** INTERNATIONAL THANKSGIVING DAY

# TELETHON 2017

NOVEMBER 23



**LIVE BROADCAST** 10AM-10PM PST

CENTRAL CALIFORNIA	SOUTHERN CALIFORNIA	SAN FRANCISCO & BAY AREA	LAS VEGAS
KGMC OTA Ch. 43.6 and Ch. 13.1 Comcast Xfinity Ch. 375 Northland Ch. 2 and Ch. 9 Noor TV Ch. 31.7	Armenian Channels & KVMD Network	KTSF OTA Ch. 26.1 DirecTV Ch. 26 Dish Network Ch. 26 Comcast Ch. 8 AT&T U-verse Ch. 8	ArMount TV

**12 HOUR LIVE WEBCAST AT [WWW.ARMENTIAFUND.ORG](http://WWW.ARMENTIAFUND.ORG)**

Designed by: Lilit Khachatryan



[Facebook.com/ArmeniaFund](https://www.facebook.com/ArmeniaFund)



[Twitter.com/ArmeniaFund](https://twitter.com/ArmeniaFund)



[instagram.com/ArmeniaFund](https://www.instagram.com/ArmeniaFund)



[YouTube.com/ArmeniaFundUS](https://www.youtube.com/ArmeniaFundUS)



**VISIT & DONATE:** [www.ArmeniaFund.org](http://www.ArmeniaFund.org) or Call: 1-800-888-8897